# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառումը ՀՀ դատարանների կողմից



Sida

Մարդու իրավունքների պաշտպան

UNDP Armenia

Երևան 2009

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանա-պատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառումը ՀՀ դատարանների կողմից

*Վերլուծությունը կատարվել է 2008թ-ի հունվարի 1-ի դրությամբ*

Երևան 2009

## *Երախտագիտության խոսք*

*2008թ. Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Հայաստանի գրասենյակը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աջակցությամբ անցկացրեց ուսումնասիրություն ՀՀ դատարաններում ՄԱԿ-ի մարդու իրավունքների դաշնագրերի կիրառելիության մակարդակը բացահայտելու նպատակով: Ուսումնասիրությունը իրականացրեցին ՄԱԶԾ ազգային փորձագետներ՝ ի.գ.թ. Դավիթ Հակոբյանը, ի.գ.թ. Արթուր Ղամբարյանը և ի.գ.թ. Տիգրան Սերոբյանը: Ծրագրի այս փուլում ուսումնասիրվեց ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի «Աշխատանքի և աշխատանքի արդար և բարենպաստ պայմանների իրավունքի» և ՄԱԿ-ի Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայի իրացումը ՀՀ դատարանների կողմից ինչի արդյունքում պատրաստվեցին երկու առանձին զեկույցներ: Զեկույցները լրամշակվել են ՀՀ Դատական դեպարտամենտի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից տրված փորձագիտական կարծիքի և առաջարկությունների հիման վրա:*

*ՄԱԶԾ գրասենյակը շնորհակալություն է հայտնում բոլոր այն կազմակերպություններին և փորձագետներին, որոնք աջակցություն են ցուցաբերել փորձագիտական խմբին զեկույցը պատրաստելու ընթացքում: Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, ՀՀ Դատական դեպարտամենտի ղեկավարությանը և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին ուսումնասիրությանը մասնագիտական աջակցություն ցուցաբերելու, անհրաժեշտ նյութերը տրամադրելու և զեկույցի վերաբերյալ փորձագիտական կարծիք և առաջարկություններ ներկայացնելու համար:*

## *Հիշեցում*

*Զեկույցը պատրաստվել և տպագրվել է ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի «Մարդու իրավունքների պաշտպանություն, խթանում և կրթություն» և «Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների հզորացում» ծրագրերի շրջանակներում ՄԱԶԾ և Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ: Զեկույցում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԿ-ի, ներառյալ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության տեսակետները:*

*Զեկույցը պատրաստվել է 2008թ. հունվար ամսին:*

# Բովանդակություն

**Նախաբան** .................................................. **5**

Ա. Կոնվենցիայի հեղինակությունը/իրազեկումը իրավաիրացման ոլորտում .......... **5**

Բ. Վերլուծության առարկան .......... **6**

Գ. Մեթոդաբանությունը .......... **7**

**1. Կոնվենցիայի իմպլեմենտացիան ՀՀ ներպետական օրենսդրության մեջ** .......... **9**

**2. Խոշտանգումների մասին հաղորդումների պատշաճ քննություն** .......... **13**

1. Դատարանը՝ որպես խոշտանգումը նույնականացնող մարմին .......... **13**

2. Դատարանը՝ որպես պատշաճ քննության երաշխավոր .......... **18**

Խոշտանգումների մասին հայտարարությունների պատշաճ քննության ինստիտուցիոնալ խնդիրները .......... 18

Ծառայողական քննությունը՝ որպես խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններով քննության ձև .......... 19

**3. Կոնվենցիայի ուսուցումը դատավորների և իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման դասընթացներում** .......... **24**

**Առաջարկություններ** .......... **26**

# Համառոտագրություններ

| | |
|---|---|
| Կոնվենցիա | Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա |
| Կոմիտե | ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտե |
| ՀՀ քր. դատ. օր. | ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք |
| ՀՀ քաղ. դատ. օր. | ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք |
| ՀՀ քր. օր. | ՀՀ քրեական օրենսգիրք |

# Նախաբան

## ա. Կոնվենցիայի հեղինակությունը իրավահրացման ոլորտում

Հայաստանի Հանրապետությունը Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիային միացել է 1993 թվականին: Վերջինս միջազգային այն եզակի փաստաթղթերից է, որը մի շարք հաշվետվական բնույթի պարտավորություններ է սահմանել մասնակից պետությունների նկատմամբ իր դրույթների կիրառումը էլ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Մասնակից պետությունները պարտավոր են Խոշտանգումների դեմ կոմիտեին զեկուցել Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին՝ Կոնվենցիայի տվյալ պետության համար իրավաբանական ուժ ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում, իսկ ապա՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ: Կոմիտեն ուսումնասիրում է ստացված հաշվետվությունները և իր մտահոգություններն ու հանձնարարականները շարադրում իր դիտողություններում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ-ն Կոմիտեին հաշվետվություն է ներկայացրել 1995-ին և 1999-ին՝ խախտելով չորս տարին մեկ ընթացիկ հաշվետվություն ներկայացնելու ստանձնած պարտավորությունը[1]:

Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրվում է խոշտանգման հետևյալ բնորոշումը.

*Ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն:*

Կոմիտեն, Կոնվենցիայով սահմանված պայմանների առկայության դեպքում ուսումնասիրելով անհատներից և պետություններից ստացված բողոքները, կարող է արձանագրել Կոնվենցիայով սահմանված որևէ պարտավորության խախտում[2]: Ավելին, եթե Կոմիտեն տիրապետում է հավաստի տեղեկատվության առ այն, որ մասնակից պետության տարածքում խոշտանգումները կրում են պարբերական բնույթ, ապա Կոնվենցիայով սահմանված կարգով կարող է իր անդամներին հանձնարարել խորհրդապահական կարգով իրականացնել կոնֆիդենցիալ հետաքննություն, այդ թվում՝ մասնակից պետության համաձայնությամբ կազմակերպել անդամների այցելությունը տվյալ պետություն[3]: Հարկ է նշել, որ մինչ օրս որևէ հասարակական կազմակերպություն չի դիմել Կոմիտեին՝ հայտարարելով, որ ՀՀ-ում պարբերաբար տեղի են ունենում խոշտանգումներ, ասենք, ոստիկանության ստորաբաժանումներում, զինված ուժերում, քրեակատարողական հիմնարկներում և այլն, ինչը Կոմիտեի մոտ կառաջացներ հետաքննություն իրականացնելու անհրաժեշտության կապակցությամբ քննարկումներ, թեև նմանատիպ հայտարարություններ կան զանգվածային լրատվության միջոցներում: Նման պասիվությունը ավելի շատ վկայում է Կոնվենցիայի վերաբերյալ իրազեկման ցածր աստիճանի մասին:

Կոնվենցիան ՀՀ-ի համար ուղղակիորեն նախատեսում է մի շարք պարտավորություններ (հաղորդումների պատշաճ քննություն, փոխհատուցման իրավունք և այլն), և դրանով սահմանված իրավունքների խախտման յուրաքանչյուր դեպք, անկախ ներպետական օրենսդրության կոնկրետ նորմի խախտման, կհանդիսանա համապատասխան

1 ՀՀ արտաքին գործերի նախարարությունը պատրաստվում է հաշվետվություն ներկայացնել Կոմիտեին 2009 թվականի ընթացքում:

2 Հայաստանի Հանրապետությունը չի ճանաչել /opt in/ Կոմիտեի նշված իրավազորությունը, որը սահմանված է Կոնվենցիայի 21-րդ և 22-րդ հոդվածներով:

3 Կոնվենցիայի 20-րդ հոդվածով սահմանված այս մեխանիզմը գործում է Հայաստանի Հանրապետության նկատմամբ, քանի որ Կոնվենցիային միանալիս դրա 28-րդ հոդվածով սահմանաված կարգով Հայաստանի Հանրապետությունը վերապահում չի արել /opt out/:

միջազգային սանկցիա կիրառելու իրավական հիմք: Այլ կերպ ասած, Կոնվենցիայով նախատեսված մի շարք դրույթներ (self executing), որոնք սահմանում են մասնակից պետությունների համար որոշակի պարտավորություն-ներ և անձի համար որոշակի իրավունքներ, գործում են անմիջականորեն՝ անկախ ներպետական օրենսդրության մեջ դրա իմպլեմենտացումից: Այսքանով հանդերձ, ՀՀ Վճռաբեկ դատարանի դատական պրակտիկայի ուսումնասի-րությամբ պարզվեց, որ չկա որևէ դեպք, երբ ՀՀ Վճռաբեկ դատարանը վկայակոչել է Կոնվենցիան: Ընդհանրապես, եզակի դեպքեր են հանդիպում, երբ իրավասու պետական մարմինը հիշատակում է քննարկվող փաստաթուղթը: Օրի-նակ՝ Արդարադատության խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 2007 թ. հուլիսի 25-ի որոշման մեջ նշել է, որ դատավորի կողմից թույլ տրված ի թիվս այլ խախտումների՝ խախտվել են նաև ՀՀ վավերացրած «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի պահանջները, սակայն չի մասնանշվել, թե կոնկրետ որ դրույթն է խախտել դատավորը[4]: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, 2008 թվականի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգա-ցումների վերաբերյալ արտակարգ զեկույցում հայտարարելով, որ մարտի մեկի առավոտյան Ազատության հրապա-րակի օպերացիայի ժամանակ բազմաթիվ անձինք խոշտանգվել են, ուղղակիորեն մեջբերեց Կոնվենցիայի 2-րդ հոդվածը և մասնանշեց, որ ոչ մի բացառիկ իրադրություն, ինչպիսին էլ այն լինի՝ ներքին քաղաքական անկայու-նություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող հանդիսանալ խոշտանգումների արդարացում[5]:

Առավել տարածված են դարձել ՀՀ դատարանների կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի կիրառման դեպքերը: Նման պրակտիկայի պատճառը նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով միայն Եվրոպական դատարանի որոշումների նախադեպային նշանակության ճանաչումն է:

Կոնվենցիան փաստաբանների շրջանում ևս առանձնակի հեղինակություն չի վայելում: Կատարված ուսումնա-սիրություններից պարզվել է, որ փաստաբանները իրենց վստահորդների նկատմամբ վարույթն իրականացնող մար-մինների կողմից խոշտանգումներ կիրառելու վերաբերյալ բողոքներում, միջնորդություններում, որպես կանոն, չեն վկայակոչում Կոնվենցիան: Նրանք առավելագույնս սահմանափակվում են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վկայակոչմամբ: Օրինակ՝ ՀՀ-ում մեծ աղմուկ բարձրացրած Լևոն Գուլյանի (ըստ նրա իրավահաջորդի ներկայացուցիչների՝ խոշտանգման է ենթարկվել ոստի-կանության Երևանի Շենգավիթի բաժնում) քրեական գործով վարույթը կարճելու մասին դատախազի որոշումը դատարան բողոքարկելիս փաստաբանների կողմից 12 էջից բաղկացած բողոքում այդպես էլ չէր վկայակոչվել Կոնվենցիան, միևնույն ժամանակ բազմաթիվ դատական նախադեպեր՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայից մանրամասն վերլուծվում են տվյալ գործում[6]:

Այսպիսով, Կոնվենցիան ՀՀ դատական իշխանության մարմինների, ինչպես նաև փաստաբանական ինստիտուտի շրջանում մեծ հեղինակություն չի վայելում:

## բ. Վերլուծության առարկան

Թեև Կոնվենցիայի հրազեկումը բավականին ցածր է հասարակության մեջ, և իրավակիրառողներն էլ գրեթե չեն վկայակոչում այն, այնուամենայնիվ, նրա մի շարք նորմեր գործում են ուղղակիորեն, նրանով սահմանված են մի շարք կոնկրետ պարտավորություններ մասնակից պետությունների համար: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ուսումնասիրել նշված նորմերի վիրտուալ պահպանումը և կիրառումը ՀՀ դատական մարմինների կողմից:

4 Արդարադատության խորհուրդը քննության էր առել արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Լ. Աքայանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ ՀՀ նախագահին առաջարկ ներկայացնելու մասին: ՀՀ արդարադատության նախարարի միջնորդության համաձայն՝ դատավորի դատավճռի պատճառաբանական մասում նշվել է. «Դատարանը, գնահատական տալով Ք-ի և Ֆ-ի նախաքննության և դատաքննության ժամանակ տված հակասական ցուցմունքներին, գտնում է, որ իրականում հետաքննության մարմնի կողմից ռազմական ոստիկանության բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար»: ՀՀՊՏ 25.07.07 /37(561)

5 http://www.levon-gulyan.info/

6 ՀՀ մարդու իրավունքների պաշտպան: Արտահերթ հրապարակային զեկույց, 2008, էջ 42:

Սույն հետազոտության ընթացքում առավելապես ուսումնասիրվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից Կոնվենցիայի կիրառման պրակտիկան, ինչը պայմանավորված է ՀՀ Վճռաբեկ դատարանի սահմանադրական նոր կարգավիճակով: Վերջինս դատական քաղաքականություն ձևավորող սուբյեկտ է, որի որոշումները էական ազդեցություն ունեն ստորադաս դատարանների իրավակիրառ պրակտիկայի վրա, իր ակտերով ստորադաս դատարաններին ուղղություն է տալիս կամ կարող է տալ միջազգային իրավական նորմերի ընկալման և կիրառման հարցում [7]: Բացի այդ, ՀՀ քր. դատ. օր-ի 185-րդ, 263-րդ հոդվածների համաձայն՝ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել իրավասու դատարան: Հետևաբար, հատուկ ուշադրության են արժանի նաև առաջին ատյանի դատարանի կողմից նշված հարցերով կայացված ակտերը, մասնավորապես բողոքարկվող որոշումների վերացնելիս կամ հաստատելիս Կոնվենցիայի պահանջների պահպանման վերլուծությունը:

Ճիշտ է, Կոնվենցիան նախատեսում է մի շարք self executing դրույթներ, այնուամենայնիվ, Կոնվենցիայի դրույթների ոչ ճշգրիտ իմպլեմենտացիան կամ դրա բացակայությունը խոչընդոտում, իսկ առանձին դեպքերում նաև բացառում է ՀՀ քաղաքացիների կամ փաստաբանների կողմից Կոնվենցիայի դրույթների անշեղ կատարման պահանջով հանդես գալը: Խոսքը վերաբերում է մասնավորապես ՀՀ քր. օր-ում խոշտանգման հանցակազմի՝ Կոնվենցիայի համապատասխանությանը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ քննարկվող միջազգային փաստաթղթի կիրառելիության տեսանկյունից սույն հետազոտության շրջանակներում առավելապես կուսումնասիրվեն և կվերլուծվեն.

- ՄԱԿ-ի կոնվենցիայի իմպլեմենտացիան ներպետական օրենսդրությամբ այնքանով, որքանով դա ազդում է դատարանների կողմից Կոնվենցիայի կիրառման վրա,
- ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված որոշակի իրավունքների պաշտպանությանը կամ իրականացմանը ներկայացվող պահանջների պահպանումը ՀՀ դատարանների կողմից, մասնավորապես՝ կվերհանվեն առավել հանդիպող խախտումները, օրենսդրական բացերը, կտրվեն դրանց շտկման ուղիներ:

Հարկ է նշել, որ հետազոտությունն իրականացվում է բացառապես դատարանների կողմից Կոնվենցիայի կիրառումը վերհանելու ուղղությամբ, ուստի Կոնվենցիայի մի շարք հոդվածներ, որոնք որևէ առնչություն չունեն դատարանների հետ, կամ բացակայում է այդ կապակցությամբ դատական պրակտիկա (օրինակ՝ օտարերկրյա քաղաքացու արտաքսում), չեն ենթարկվի մանրակրկիտ վերլուծության:

Սույն վերլուծությունում անդրադարձ է կատարվել Կոնվենցիայի 1-ին, 3-րդ, 4-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ հոդվածներին:

## գ. Մեթոդաբանությունը

Վերլուծությունն իրականացվել է փաստաթղթերի ուսումնասիրության, շահագրգիռ սուբյեկտների հետ հանդիպումների կազմակերպման, քրեական առանձին գործերով դատավարությունների լսումների եղանակով:

Այս հետազոտության շրջանակներում իրականացվել է հետևյալ փաստաթղթերի/ տվյալների բազաների հետազոտություն.

- Կոնվենցիայի կիրառական ոլորտների ուսումնասիրություն, միջազգային չափորոշիչների և չափանիշների վերլուծություն,

7 ՀՀ Վճռաբեկ դատարանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, ապահովում է օրենքի միատեսակ կիրառությունը (ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մաս): ՀՀ Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակն ամրագրող այս նորմը կանխորոշեց ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերի նախադեպային (պարտադիր) իրավաբանական բնույթը և նշանակությունը, որն ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում՝ *որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:*

- տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի կողմից ՀՀ-ի վերաբերյալ ընդունված հանձնարարականների և դրանց վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշումների վերլուծություն,
- ԶԼՄ-ների հետազոտություն,
- ՀՀ դատական պրակտիկայի վերլուծություն,
- Մարդու իրավունքների պաշտպանի զրասենյակի տեղեկատվական բազայի հետազոտում:
- ՀՀ դատական դպրոցի, դատախազության դպրոցի, բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսումնական ծրագրերի հետազոտում:

Սորև նշված հանդիպումների արդյունքում հստակեցվել է մեզ հետաքրքրող գործերի շրջանակը՝ դրանով իսկ պայմանավորելով առավել վիճահարույց գործերի ընտրությունը:

1. ՀՀ դատախազություն, «Դատախազության դպրոց», «Դատական դպրոց» Պետական ոչ առևտրային կազմակերպություն: Քննարկվել են ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգման հանցակազմի, քրեական դատավարության ընթացքում ցուցմունքների կորզման պրակտիկան, այս հանցակազմերի կիրառման ժամանակ ծագող օրենսդրական խնդիրները, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրականացման շրջանակներում խոշտանգումներ կիրառելու վերաբերյալ հաղորդումների ստուգման իրավական միջոցները, ինչպես նաև դատավարական օրենսդրության փոփոխություններից հետո դատախազի կողմից խոշտանգումների նախականխման հնարավորությունները: Բացի այդ, դատախազների վերապատրաստման դասընթացների ժամանակ բացահայտվել է, թե որքանով են ներկայացվում խոշտանգումների արգելքի վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերը, իրականացվել է դատախազների վերապատրաստման ուսումնական ծրագրերի ուսումնասիրություն:
2. Հանդիպումներ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ:
3. Քրեական գործերով դատական նիստերին մասնակցություն՝ դատավորի գործելաոճը գնահատելու, դատավորի և դատավարության կողմերի փոխհարաբերությունները վերլուծելու նպատակով:
4. Հանդիպումներ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ Սախարովի՝ Մարդու իրավունքների հայկական կենտրոն, Հելսինկյան ասոցիացիա, Հելսինկյան կոմիտե, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի՝ Վանաձորի գրասենյակ, Ընդդեմ իրավական կամայականության, որոնք մասնակցում են վարույթներին որպես փորձագետներ, հայցվորների կամ պատասխանողների ներկայացուցիչներ կամ amicus curiae շրջանակում: Նրանց կողմից տրամադրված տեղեկատվությունը մեծապես պայմանավորել է մեր հետազոտության առարկան կազմող գործերը:
5. Փաստաբանների պալատ: Քննարկվել են հիմնական դատավարական խնդիրները, որոնք ծագում են փաստաբանների կողմից խոշտանգումների մասին հաղորդումներ ներկայացնելու, դրանք քննարկելու և լուծելու ընթացքում: Ներկայացվել են փաստաբանների վերապատրաստման ինստիտուցիոնալ համակարգի ներդրման խնդիրները:
6. Հավաստագրված փաստաբանների հետ քննարկվել են գործի արդարացի քննության և խոշտանգումներին վերաբերող առավել հաճախ հանդիպող նյութական կամ դատավարական իրավունքի սխալ կիրառումները, ինչպես նաև հավաստագրված փաստաբանների բողոքների ընդունման կամ դրանց մերժման հիմքերի մասին տեղեկատվությունը:
7. ՀՀ դատական դեպարտամենտի հետ համագործակցության հաստատում՝ դատական ակտերի և իրականացված ուսումնասիրությունների տրամադրման նպատակով :

# 1. Կոնվենցիայի իմպլեմենտացիան ՀՀ ներդեսական օրենսդրության մեջ

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ *մասնակից պետությունները ապահովում են, որ խոշտանգումների բոլոր դրսևորումները դիտվեն իբրև հանցագործություն:* Ավելին, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առնչությամբ 2007 թ. նոյեմբերին Կոմիտեի կողմից արված ընդհանուր մեկնաբանության մեջ շեշտվում է, որ մասնակից պետությունները պարտավոր են բրեականացնել խոշտանգման հանցակազմը՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված հատկանիշներով[8]:

«Խոշտանգում» եզրույթով հանցակազմ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածում, համաձայն որի՝ *խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանքներ, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ (առողջությանը դիտավորությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս հասցնելը):* Նշված արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 3 տարի ժամանակով: ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված խոշտանգումը չի ներառում անգամ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, ինչը մեծապես նվազեցնում է խոշտանգման հանրային վտանգավորությունը՝ այն դասելով միջին ծանրության հանցագործությունների շարքին:

Այս հանցակազմը սահմանված է «Մարդու դեմ ուղղված հանցագործություններ» բաժնում (այլ ոչ թե «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ» բաժնում), ավելի նվազ պաշտպանություն է սահմանում, քան, ասենք, անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելը: ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման հանցակազմը Կոնվենցիայի իմաստով խոշտանգումից որակական տարբեր հատկանիշներ է պարունակում, նախ՝ հանցակազմի առկայության համար հատուկ սուբյեկտ չի պահանջվում, այսինքն՝ պաշտոնատար անձի կամ վերջինիս թողտվությամբ ուժեղ ցավի կամ մարմնական, բարոյական տառապանքի պատճառում, ինչպես նաև բացակայում է կոնկրետ նպատակ, այն է՝ տուժողից կամ երրորդ անձից տեղեկատվություն կամ ինքնախոստովանություն ստանալու, որոշակի գործողության կատարման համար վախեցնելու կամ պատժելու և այլն: Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված «խոշտանգման» հանցակազմը առկա է, երբ անձը մեկ այլ անձի ուժեղ ցավ կամ տառապանք է պատճառում: Նշված հանցակազմը ոչ թե ամբողջությամբ չի ներառում Կոնվենցիայով սահմանված խոշտանգման տարրերը, այլ նախատեսում է որակապես տարբեր, «կենցաղային» հանցագործություն: Այս կապակցությամբ դեռևս 2000 թ. նոյեմբերի 17-ին Կոմիտեն Հայաստանի վերաբերյալ դիտողությունների 37-րդ կետում մտահոգություն է հայտնել, որ քրեական օրենսգրքի նախագծում տրված «խոշտանգում» հասկացությունը չի պարունակում Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված խոշտանգման մի շարք հատկանիշներ, և առաջարկ է արվել խոշտանգման հանցակազմը համապատասխանեցնել Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված բնորոշմանը[9]: Բացի այդ, Կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունների իրավասու մարմինները պետք է անհապաղ և անաչառ հետաքննություն իրականացնեն, երբ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ կիրառվել է խոշտանգում: Մինչդեռ ՀՀ քր. դատ. օր. 183-րդ հոդվածը «խոշտանգում» հանցակազմի վրա տարածում է քրեական գործի հարուցման մասնավոր մեղադրանքի ռեժիմը, որի պայմաններում քրեական գործի հարուցման համար պահանջում է տուժողի բողոքի առկայություն, իսկ կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու դեպքում ենթակա է կարճման:

Իրականում՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված խոշտանգման հատկանիշները արտացոլված են ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից խոշտանգմամբ ... վկային, կասկածյալին, մեղադրյալին կամ տուժողին ցուցմունք

8 Committee against Torture, General comment N2, Implementation of Art. 2 by States parties, http://www2.ohchr.org/english/bodies/cat/docs/CAT.C.GC.2.CRP.1.Rev.4–en.pdf

9 Concluding observations of the Committee against Torture: Armenia. 17/11/2000. Committee against Torture, Twenty-fifth session. 13-24 November 2000.

կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը պատժվում է ազատազրկմամբ 3-8 տարի ժամկետով: Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգիրքը որպես խոշտանգում քրեականացրել է միայն դատավարության ընթացքում խոշտանգմամբ ցուցմունք կամ ցանկալի եզրակացություն տալուն հարկադրելու դեպքերը՝ դրանով իսկ դուրս թողնելով ընդհանրապես պետական պաշտոնատար անձի կողմից կամ նրա հովանավորությամբ որոշակի նպատակով Կոնվենցիայի իմաստով խոշտանգման կիրառման բազմաթիվ այլ ոլորտներ՝ խոշտանգում հանրահավաքների ժամանակ, (օրինակ՝ ոստիկան-ցուցարար), քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, խոսքի ազատության ճնշման նպատակով և այլն: Սրանք այն ոլորտներն են, որտեղ պետական պաշտոնատար անձի կողմից Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված նպատակով բռնություններ կամ այլ գործողություններ կատարելը ՀՀ քր. օր-ում պետք է ուղղակիորեն դիտվի որպես խոշտանգում: Անգամ քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից բռնության ոչ ամեն մի դրսևորում տեսականորեն կարող է առաջացնել խոշտանգման հանցակազմի կիրառում՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի: Քրեական քաղաքականությունից դուրս են մնացել հենց նույն քննիչի, ոստիկանի կողմից բացատրություն տալուն, հաղորդում ներկայացնելուն, մեղայականով ներկայանալուն հարկադրելու նպատակով խոշտանգելու կամ երրորդ անձից ցուցմունք ստանալու նպատակով պատճառված դաժան ցավը կամ տառապանքը: Բոլոր այդ դեպքերում պաշտոնատար անձը կենթարկվի քրեական պատասխանատվության՝ պաշտոնական լիազորությունների անցման և/կամ առողջությանը ծանր վնաս հասցնելու հանցագործությունների համակցությամբ: Տարօրինակ է, բայց փաստ, որ համակցություն չի կարող կիրառվել 119-րդ հոդվածով սահմանված խոշտանգման հետ, քանի որ 309-րդ հոդվածի 2-րդ մասում որպես պաշտոնական լիազորությունների անցման ծանրացնող հանգամանք նախատեսված է բռնության կիրառում: Վերջինս, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի տրամաբանության, բացի առողջությանը ծանր վնաս պատճառելուց՝ ներառում է բռնության բոլոր դեպքերը (այդ թվում՝ խոշտանգումը), սահմանում բռնության բոլոր դրսևորումների համար միևնույն սանկցիա, ինչը չի արտացոլում Կոնվենցիայի իմաստով խոշտանգման հանրային վտանգավորությունը: Այս առթիվ հարկ է նշել, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի կապակցությամբ 2007 թվականի ընդհանուր մեկնաբանության մեջ Կոմիտեն նշել է, որ եթե Կոնվենցիայի իմաստով խոշտանգման դեպքում անձը ենթարկվի քրեական պատասխանատվության ոչ թե խոշտանգման, այլ, ասենք, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի համար, այլ խոսքով՝ որակապես նվազ ծանրության հանցակազմով, ապա առկա է Կոնվենցիայի խախտում: Իսկ մեր դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ չունենալով բուն խոշտանգման հանցակազմ՝ նրա տակ ընկնող արարքների դեպքում անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության ծեծի, պաշտոնական լիազորությունների անցման, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար, ինչը հնարավորություն չի տալիս հասարակական կազմակերպություններին, լայն հանրությանը՝ նպատակաուղղված վերահսկելու Կոնվենցիայի իմաստով խոշտանգումների առնչությամբ քրեական գործերով վարույթները: Հարկ է ընդգծել, որ այս հանցագործության կատարողները կարող են համաներման կամ ներման միջոցով ազատվել քրեական պատասխանատվությունից կամ պատժից, ինչը դեմ է այն հաստատված միտումին, որ խոշտանգողների նկատմամբ պետք է բացառել որևէ համաներման կամ ներման կիրառում: Այդ մասին նշել  է նաև Կոմիտեն իր՝ 2-րդ հոդվածի կապակցությամբ արված ընդհանուր մեկնաբանության մեջ:

ՀՀ քր. օր-ի 341-րդ հոդվածի 2-րդ մասում խոշտանգումը գործածվում է որպես դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից կիրառված հակաօրինական վարքագծի ծանրացնող հանգամանք՝ ուղղված վկային, կասկածյալին, մեղադրյալին կամ տուժողին ցուցմունք, փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, իսկ թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելուն[10]: Ավելին, նույն հոդվածի 3-րդ մասը որպես էլ ավելի ծանրացնող հանգամանք, սահմանել է. «...նույն արարքները, որոնք առաջացրել են ծանր հետևանքներ»: Մի շարք հարցադրումներ են առաջանում. ինչո՞ւ. խոշտանգմամբ ուղեկցված արարքը չի՞ առաջացնում ծանր հետևանքներ, կամ որո՞նք են հոդվածի այդ մասով ենթադրված ծանր հետևանքները, որոնք որակական առումով տարբեր են խոշտանգումից:

Կոնվենցիայի իմպլեմենտացիոն գործընթացի նկատմամբ ՀՀ պետական իշխանության մարմինների կողմից չի

10 Խոշտանգումը օգտագործվում է որպես ծանրացնող հանգամանք արդարադատության դեմ ուղղված հանցագործության համար: ՀՀ քր. օր-ի 341-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված արարքը ենթադրում է սպառնալիքի կամ օրինական այլ գործողությունների կիրառում, բայց ոչ խոշտանգում:

դրսևորվել համալիր մոտեցում: Հատվածային հաջողված իմպլեմենտացիայի օրինակ է ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված այն դրույթը, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է հանձնվի օտարերկրյա այն պետությանը, որտեղ լուրջ վտանգ կա, որ նրան կարող են սպառնալ խոշտանգումներ կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ:

Կոնվենցիայի առանձին դրույթներ չեն մասնավորեցվել ՀՀ քրեական օրենսգրքում, քանի որ ընկնում են վերջինիս ընդհանուր կատեգորիաների շարքը: Այսպես, ՀՀ քր. օր. 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ակնհայտ անօրինական հրամանով կամ կարգադրությամբ դիտավորյալ հանցանք կատարած անձը պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով: Այս դրույթը փաստորեն համահունչ է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի՝ վերադասի հրամանը չի կարող արդարացնել խոշտանգումը: Պրակտիկայում եղել է դեպք, երբ խոշտանգմամբ կորզած ցուցմունքը դատավորի կողմից ոչ միայն չի դիտվել օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույց, այլև օրինականացվել է, քանի որ «ուղղված է եղել ճշմարտությունը բացահայտելուն»[11]: Ուստի հասուն անհրաժեշտություն է առաջանում սահմանելու մասնավոր նորմ՝ խոշտանգման օրինականացումը բացառելու նպատակով:

ՀՀ քրեական օրենսգիրքը, ելնելով Կոնվենցիայի պահանջներից, համընդհանուր իրավազորություն է ճանաչում խոշտանգման բոլոր դեպքերի նկատմամբ, ներառյալ եթե դրանք կատարվել են ՀՀ տարածքից դուրս օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց կողմից[12]: ՀՀ քր. օր. 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ քրեական օրենքը կիրառվում է, եթե օտարերկրյա քաղաքացիները տվյալ հանցագործության համար չեն դատապարտվել մեկ այլ պետության տարածքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում Կոնվենցիայի իմաստով խոշտանգման նկատմամբ սովորաբար կիրառվում է պաշտոնական լիազորությունների անցում հանցակազմը, ապա քրեական օրենքը չի կարող կիրառվել տվյալ անձի նկատմամբ, եթե վերջինս քրեական պատասխանատվության է ենթարկվել պաշտոնական լիազորությունների անցման համար: Ավելին, օրենքը չի նախատեսում որևէ բացառություն, մասնավորապես, երբ տվյալ պետությունում դատաքննությունը արդար չի իրականացվել (իմիտացիա), ունեցել է հստակ նպատակ ենթադրյալ հանցավորին ազատել քրեական պատասխանատվությունից /պատժից, ներում է շնորհել և այլն:

ՄԱԿ-ի Կոնվենցիայում տրված «խոշտանգում» եզրույթին համարժեք հանցակազմի բացակայությունը ՀՀ քր. օր-ում մեծապես բարդացնում է ՄԱԿ-ի Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հանրության արդյունավետ վերահսկողության իրականացումը: Չկա միասնական խոշտանգում հանցակազմ, որը համահունչ լիներ Կոնվենցիայով և միջազգային իրավունքում դրա ընկալմանը: Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքով քրեականացված չէ նաև խոշտանգման, այսպես կոչված, պասիվ դրսևորումը, երբ իրական հիմքեր կան ենթադրելու, որ անձը ենթարկվում է խոշտանգումների մասնավոր անձի կողմից, իսկ պետական պաշտոնյան չի ձեռնարկում խոշտանգումները կանխելու կամ պատշաճ հետաքննություն իրականացնելու ուղղությամբ որևէ միջոց, ասենք՝ նպատակ հետապնդելով մասնավոր անձանց ազատելու քրեական պատասխանատվությունից: Նման դեպքերում Կոմիտեն գտնում է, որ այդ պետական պաշտոնյան պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության որպես կատարող կամ օժանդակող: Արարքները, որոնք ընկնում են Կոնվենցիայի իմաստով խոշտանգման տակ, ՀՀ քրեական օրենսգրքում տարածված են բազմաթիվ հանցակազմերում, ինչը բարդացնում է հանրության վերահսկողությունը նման վարույթների նկատմամբ, բացառում խոշտանգման հանցագործությամբ վիճակագրության իրականացումը:

Չունենալով խոշտանգում հանցակազմ Կոնվենցիայի իմաստով, անհնարին է դառնում պարզել խոշտանգման զոհերի փոխհատուցման հիմնահարցը: Ըստ պաշտոնական տվյալների՝ անցյալ տարի որևէ քրեական գործ դատարանում չի քննվել 341-2 հոդվածի հատկանիշներով: Թեև ՀՀ օրենսդրությամբ պետությունը պատասխանատվություն է կրում պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների հետևանքով պատճառված վնասի համար, սակայն գործերի բացակայությունը մեզ թույլ չի տալիս վերհանել փոխհատուցման արդարացի և համարժեք

11 ՀՀՊՏ 25.07.07./37(561)

12 ՀՀ Քր. օր-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ-ում մշտապես չբնակվող քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր հանցանքը կատարել են ՀՀ տարածքից դուրս, ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քր. օր-ով այնպիսի հանցագործությունների համար, որոնք նախատեսված են ՀՀ միջազգային պայմանագրով:*

լինելը: Նմանապես անհնարին է դառնում հասարակական հիմնադրամների ստեղծումը խոշտանգման զոհե-րին փոխհատուցում տրամադրելու նպատակով: Այսօր այդ դեպքերի զգալի մասը արձագանք է գտնում ՀՀ քր. օր-ի զանազան հոդվածներում:

***Եզրակացություն***

***Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առնչությամբ 2007 թվականի նոյեմբերին Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությամբ սահմանված է, որ պետությունները պարտավոր են մշտապես բարեփոխել իրենց օրենսդրությունը՝ հաշվի առնելով Կոմիտեի դիտողությունները և անհատական գործե-րով հայտնած տեսակետները[13]: ՀՀ քր. օր-ում համալիր և ամբողջական կերպով արտացոլված չէ Կոնվենցիայի իմաստով խոշտանգման հատկանիշներ պարունակող հանցակազմ:***

13 Committee against Torture, Geneal comment N2, Implementation of Art. 2 by States parties, http://www2.ohchr.org/english/bodies/cat/docs/CAT.C.GC.2.CRP.1.Rev.4–en.pdf

## 2. Խոշտանգումների մասին հաղորդումների դատական քննություն

Խոշտանգումների կիրառման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ խոշտանգման զոհ են դառնում առավելապես որոշակի գործով քրեական դատավարության սուբյեկտ հանդիսացող անձինք, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալները, կալանքի տակ գտնվող անձինք, քաղաքական գործիչները, քաղաքական ակցիաների մասնակիցները և այլն: Դա է պատճառը, որ Կոնվենցիան իր առանձին հոդվածներում, հանձնարարականներում անդրադառնում է խոշտանգումների կոնկրետ դրսևորումներին, սահմանում դրանց կանխարգելմանը և արդյունավետ դատապարտմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես, պետություններին «խորհուրդ է տալիս» սահմանել կասկածյալների, ձերբակալվածների կամ կալանավորվածների բողոքների անհապաղ քննության համապատասխան ընթացակարգեր[14], քննարկել ազատազրկման վայրերի և նախնական կալանքի պայմաններում խոշտանգումների մասին հայտարարությունների ստուգման ազգային համակարգերի ստեղծման հարցը, աջակցել անկախ դիտորդներին ազատազրկման վայրեր այցելելիս[15], երաշխավորել խոշտանգման մասին հայտարարություն անող անձի, վկաների պաշտպանությունը և այլն: Այս կառուցակարգերի շրջանակներում ՀՀ օրենսդիրը դատական իշխանությանը վերապահել է հետևյալ մասնակցությունը.

- դատաքննության ընթացքում հայտնաբերում է խոշտանգման կիրառման հնարավոր դեպքեր և այդ կապակցությամբ քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմում քրեական հետապնդման մարմնին,
- երաշխավորում է խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը կամ դրանց օգտագործման սահմանները,
- գնահատում է խոշտանգման փաստով ստացված հայտարարության ստուգման պատշաճ լինելը, որը բողոքի առկայության դեպքում իրականացնում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու կամ թողնելու հարցը քննելիս,
- գնահատում է կատարված քննության պատշաճ լինելը, որն իրականացվում է քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելիս կամ ուժի մեջ թողնելիս,
- ձեռնարկում է միջոցառումներ՝ խոշտանգման փաստով հանդես եկող վկաների, տուժողների պաշտպանության ուղղությամբ:

### 1. || Դատարանը՝ որպես խոշտանգումը նույնականացնող մարմին

Քրեական դատավարության ընթացքում մեղադրյալը կամ պաշտպանը խոշտանգման միջոցով ցուցմունքներ կորզելու փաստի վերաբերյալ հայտարարություններ առավել հաճախ անում է դատաքննության ընթացքում: Ամբաստանյալը հայտնում է իրավապահ մարմինների կողմից իր նկատմամբ կիրառված խոշտանգումների մասին, որոնց իսկությունը հավաստող փաստեր է ներկայացնում, օրինակ՝ ցույց է տալիս խոշտանգման հետքերը, մարմնական վնասվածքներ, ձերբակալման կամ նախնական կալանքի վայր տեղափոխվելիս կազմված արձանագրությունը և այլն: Դատարանը չպետք է անարձագանք թողնի նման հայտարարությունները և հուսալ, հիմնավորված և պատճառաբանված դիրքորոշում արտահայտի դրանց վերաբերյալ: Գործնականում դատարանի առջև ծառանում է երկու հարց.

ա. հանցագործության մասին հաղորդման ստուգում,

բ. խոշտանգման արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության ապահովում:

---

14 Выводы и рекомендации Комитета ООН против пыток по второму периодическому докладу Российской Федерации A/52/44, пп. 31-43 14 ноября 1996 г.

15 Committee against Torture, 37th session 6 – 24 November 2006.

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2001թ. նոյեմբերի 2-ի որոշման մեջ նշել է. «Վերաքննիչ դատարանն Ա. Հովհաննիսյանի նկատմամբ քննության անօրինական միջոցներ կիրառելու մասին հայտարարության հիմնավորումը ստուգելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու, ոստիկանության կոնկրետ աշխատակիցներին հարցաքննելու փոխարեն, նշված գործողությունը կատարելու  ցուցում տվել է նախաքննության մարմնին»[16]: Փաստորեն, այս գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն այն է, որ խոշտանգում կիրառելու վերաբերյալ հայտարարությունների հիմնավորվածությունը պետք է ստուգվի դատաքննության ընթացքում՝ ապացույցների վերլուծությամբ և նոր ապացույցներ հավաքելով: Ըստ որում, վերը նշված երկու խնդիրները դատարանը պետք է կատարի միաժամանակ, քանի որ ապացույցների թույլատրելիությունը քննարկելիս prima facie անդրադառնում է խոշտանգման փաստին: Այս առումով տարբերվում է  ՀՀ Վճռաբեկ դատարանի ստորև նշված դիրքորոշումը, որն արտահայտվել է 2001 թ. փետրվարի 8-ի որոշման մեջ. «Սույն գործով ամբաստանյալ Ա-ի պաշտպանը վճռաբեկ բողոքում նշել է, որ իր պաշտպանյալին մեղադրելու և դատապարտելու ոչ մի ապացույց ձեռք չի բերվել, իսկ «ապացույց» համարվողները վկաներից միայն բռնությամբ կորզված ցուցմունքներ են...»: ՀՀ Վճռաբեկ դատարանը արձագանքել է հետևյալ կերպ. «Բողոքում բերված այն պատճառաբանությունը, որ ցուցմունքները վկաներից կորզվել են նախաքննության ընթացքում նրանց նկատմամբ կիրառված բռնությունների միջոցով, ոչ միայն իր հիմնավորումը չի գտել  գործի նյութերով, այլև, ընդհակառակը, հաստատվել է, որ Ա-ի հարազատներն են փորձել  կիրառել  համոզման և սպառնալիքի մեթոդներ վկաների նկատմամբ, որպեսզի վերջիններս փոխեն իրենց նախաքննական ցուցմունքները կամ հրաժարվեն դրանցից»[17]: Սույն գործով Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, համաձայն որի՝ «վկաների նկատմամբ բռնություն չի կիրառվել, քանի որ դա իր հիմնավորումը չի գտել գործի նյութերով», չի կարող համարվել պատճառաբանված և հիմնավոր: Դատարանի որոշման բովանդակությունից ակնհայտ է, որ այդ հանգամանքը պատշաճ կերպով չի ստուգվել : Ավելին, անտեսվել է վկաների՝ զինվորական ծառայողներ լինելը, որոնք առավել խոցելի վիճակում են: Վճռաբեկ դատարանի այն հիմնավորումը, որ Ա-ի հարազատները  սպառնացել և համոզել են վկաներին փոխել ցուցմունքները, հիմք չէ, որ վկաների նկատմամբ քրեական հետապնդման մարմինը չի կարող բռնություն կիրառել: Դատարանը պետք է ստուգեր Ա-ի հարազատների կողմից կատարված նման գործողությունների իսկությունը և, եթե նման հիմքերի առկայությունը հաստատվեր, ապա միջնորդությամբ դիմեր քրեական գործ հարուցելու պահանջով: Վճռաբեկ դատարանը թեև հաստատված է համարել, որ Ա-ի հարազատները վկաների նկատմամբ կիրառել են սպառնալիքի մեթոդներ, սակայն, ինչպես երևում է որոշման բովանդակությունից, այդ փաստը մնացել է անհետևանք:

Վճռաբեկ դատարանը պետք է պահպանի իր իսկ կողմից ձևավորված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ խոշտանգում կիրառելու վերաբերյալ հայտարարությունների հիմնավորվածությունը պետք է ստուգվի ապացույցների վերլուծությամբ և նոր ապացույցներ հավաքելով: Վերոհիշյալ գործերից մեկում Վճռաբեկ դատարանը պարզապես նշել է, թե դատապարտյալի պատճառաբանությունն այն մասին, որ վկաներից կորզել են ցուցմունքներ, անհիմն է և չի բխում գործի նյութերից[18]: Մեկ այլ դեպքում, Վճռաբեկ դատարանի 2003 թ. հունիսի 13-ի որոշման մեջ նշվում է. «Իր նկատմամբ քննության խորթ մեթոդներ կիրառելու մասին դատապարտյալ Լ. Յակովլևի փաստարկները ստուգվել են նախաքննության ընթացքում, սակայն իրենց հաստատումը չեն գտել»: Նախ, նշենք, որ որոշման բովանդակությունից պարզ չէ, թե նախաքննության ընթացքում նշված հայտարարությունները ինչպես են ստուգվել և արդյոք ստուգվե՞լ են: Եթե նախաքննության մարմինները ստուգել են ամբաստանյալի հայտարարությունները, ապա ՀՀ գլխավոր դատախազի՝ այդ պահին գործող 2000 թ. մայիսի 10-ի «ՀՀ դատախազության մարմիններում դիմումների և բողոքների քննարկման ու քաղաքացիների ընդունելության կարգի մասին» հրամանի համաձայն՝ ձերբակալվածի կամ կալանավորվածի նկատմամբ բռնության գործադրման կամ այլ անօրինական գործողությունների վերաբերյալ դիմումներ կամ բողոքներ ստանալու դեպքում  դատախազը պարտավոր է անհապաղ ստուգել դրանցում նշված փաստերը և ըստ անհրաժեշտության ձեռնարկել դատախազական ներգործության համապատասխան միջոցներ: Վճռաբեկ դատարանի պալատի որոշման մեջ չի նշվել, թե նախաքննության ժամանակ այդ հայտարարությունը ստուգելու արդյունքում ինչպիսի գործողություններ են կատարվել, ինչ որոշում է կայացվել, որով հերքվել է հանգա-

16 ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, 2001, էջ 482:

17 ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, 2001, հատ. երրորդ, էջ 11:

18 ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, 2001, հատ. երրորդ, էջ 145:

գործության վերաբերյալ ամբաստանյալի հայտարարությունը: Նյութերի ուսումնասիրությունից պարզվեց, որ մեղադրյալ Յակովլևին ձերբակալելու հաջորդ օրը ոստիկանության հերթապահ աշխատակիցների կողմից կազմվել է արձանագրություն՝ մարմնական վնասվածքի մասին, ըստ որի՝ մեղադրյալի ոտքերի, մեջքի և ձեռքերի վրա առկա են կապտուկներ և կարմիր հետքեր: Այդ ընթացքում մեղադրյալն արդեն տվել էր ինքնախոստովանական ցուցմունքներ: Թեև նույն արձանագրության մեջ նշվել է, թե մեղադրյալն իբրև հայտարարել է, որ վնասվածքներն առաջացել են մինչև ձերբակալումը, սակայն դա չի հաստատվել առանձին քննությամբ: Նախաքննության ընթացքում լրացուցիչ հարցաքննությունների ժամանակ, ինչպես նաև դատաքննության ընթացքում մեղադրյալը բազմիցս նշել է, որ իր նկատմամբ կիրառվել են խոշտանգումներ, սակայն դա որևէ արձագանք չի ունեցել: Ամբաստանյալի մարմնի վրա եղած վնասվածքները հաստատվել են վերը նշված արձանագրությամբ և բժշկական փաստաթղթերով, ինչը բավարար հիմքեր էր տալիս ենթադրելու, որ նրա նկատմամբ կիրառվել է խոշտանգում և ստուգելու այդ հայտարարությունը, սակայն թե՛ Վերաքննիչ դատարանը, թե՛ Վճռաբեկ դատարանի պալատը անպատասխան են թողել խոշտանգելու մասին հայտարարությունը և այդ խոշտանգման արդյունքում ստացված ապացույցը դիտել որպես մեղադրական հիմնական ապացույց:

Նման հիմնավորումներն արտացոլում են դատարանի կողմից խոշտանգումների մասին հաղորդումների նկատմամբ ոչ հետևողական մոտեցումը, մասնավորապես՝ դրանց նկատմամբ գործում է զրպարտության կանխավարկած: Անհրաժեշտ է, որ դատական ակտերը նման հայտարարությունները հերքեն առավել կոնկրետ փաստերով՝ մատնանշելով այն հիմքերի բացակայությունը, որոնց առկայությունը կարող էր վկայել խոշտանգումներ կամ այլ անօրինական մեթոդներ կիրառելու մասին:

Քննության ընթացքում խոշտանգումները բացառելու նպատակով Կոնվենցիայի 11-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները պարբերաբար քննարկում են հարցաքննությանն առնչվող կանոնները, հրահանգները, մեթոդներն ու պրակտիկան, ինչպես նաև ձերբակալության պայմաններն ու անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վերաբերմունքը: ՀՀ օրենսդիրը իր հերթին հռչակել է հարցաքննության, դատավարական գործողությունների իրականացման, անազատության մեջ պահելու հիմնարար սկզբունքներ, ապա նաև սահմանել դրանց պահպանմանն ուղղված երաշխիքներ[19]: Ինքնին դատավարական նորմերի նախատեսումը լիովին չի բացառում հարցաքննության ժամանակ անօրինական մեթոդների, մասնավորապես խոշտանգման կիրառման հնարավորությունը: Ստորև նշված կանոններից յուրաքանչյուր խախտում դատարանը պետք է դիտարկի իբրև լրացուցիչ ազդակ խոշտանգման/բռնության կիրառման հնարավորության հարցը քննելիս:

1. ՀՀ քր. դատ. օր-ի 205.1-րդ հոդվածի համաձայն՝ *հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից ավելի, իսկ անչափահասների, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձանց հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի:* Հարցաքննությունը շարունակել թույլատրվում է հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 8 ժամը, իսկ անչափահասների, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձանց համար՝ վեց ժամը:

2. ՀՀ դատավարական օրենսդրությամբ փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իրավունք վերապահվում է ոչ միայն կասկածյալին, մեղադրյալին, այլև քր. դատ. օր-ի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ վկան ևս իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնին ցուցմունք տալու փաստաբանի ներկայությամբ: Փաստաբանները մեզ հետ զրուցելիս նշեցին, որ քննիչների կողմից հարցաքննությունից առաջ դատավարության մասնակիցները չեն զգուշացվում փաստաբան ունենալու իրավունքի մասին կամ նրանց

19 ՀՀ քր. դատ. օր-ի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում: Անձին չի կարելի հարկադրել մասնակցելու իր արժանապատվությունը նվաստացնող դատավարական գործողությունների: ՀՀ քր. դատ. օր-ի 11-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է քրեական դատավարությանը մասնակցող անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով: Արգելվում է անձին ներգրավել երկարաժամկետ կամ ֆիզիկական տանջանքներ պատճառող, նրա կամ շրջապատողների առողջության համար վտանգ ներկայացնող քննչական փորձարարությունների, դատավարական այլ գործողությունների մեջ:

ներկայացվում է փաստաթղթի կոնկրետ թեկնածու: Ակնհայտ է, որ եթե անձը հարցաքննվել է fրեական հե-տաղնդման մարմնի կողմից «առաջադրված» փաստաթղթի ներկայությամբ, ապա նախաքննության մարմնի հայտարարությունը, որ փաստաթուղթը հաստատել է արձանագրությունը, ոչ միայն չպետք է ունենա բարձր հավաս-տիություն, այլև հանդիսանա լրացուցիչ կասկածելի ազդակ: Որպես օրենսդրական բաց կցանկանայինf մաս-նանշել, որ առերեսումը իր բնույթով շատ նման է հարցաքննությանը, ուստի տրամաբանական է, որ ՀՀ fr. դատ. օր-ում հստակ նախատեսվի, որ վկան փաստաթղթի հետ կարող է մասնակցել նաև առերես հարցաքննությանը:

3. Դատավարության մասնակիցները պետք է իրազեկվեն փաստաթղթի ներակայությամբ հարցաքննվելու իրա-վունքի մասին: Եթե գործի նյութերում բացակայում է հավաստում, որ նա տեղեկացել է փաստաթղթի մասնակ-ցությամբ հարցաքննվելու իր իրավունքի մասին, ներառյալ՝ սեփական հայտեցողությամբ ընտրված փաստաթղ-թի միջոցով, դատավորը պետք է դիտարկի իբրև ահազանգող հանգամանf:

4. Եթե մեղադրանքի հիմքում ընկած է միայն մեղադրյալի ինքնախոստովանությունը, որից նա hրաժարվում է դատաքննության ընթացfում, ինքնախոստովանությունը պետք է մանրակրկիտ ուսումնասիրվի դատարանի կող-մից:

5. Ընդհանուր առմամբ քննչական գործողությունների արդյունքները ամրագրվում են արձանագրությամբ: Գործ-նականում երբեմն հարցաքննությանը մասնակցում են նաև հետաքննության մարմինների օպերատիվ ստրա-բաժանումների աշխատակիցները: Թեև այդօրինակ պրակտիկան ուղղակիորեն չի հակասում fr. դատ օր-ին, սակայն նման դեպքերում պետք է պահպանել ՀՀ fr. դատ. օր-ի 209-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները և արձանագրությունում նշել այն անձի տվյալները, ով մասնակցել է հարցաքննությանը: Նման տեղեկատվու-թյունը խիստ կարևոր նշանակություն ունի խոշտանգումների կիրառման առնչությամբ հայտարարությունննե-րի պատշաճ fննարկման համար: Արձանագրության մեջ մասնակիցների մասին սխալ տեղեկատվությունը ևս պետք է լրացնի կասկածելի հանգամանfների շարանը:

Դատավորը յուրաքանչյուր դեպքում, եթե գտնի, որ առկա են բավարար հիմfեր՝ ենթադրելու, որ կիրառվել է խոշտան-գում, պարտավոր է դիմել դատախազին fրեական գործ հարուցելու միջնորդությամբ: Դատավորի նման գործառույ-թը, նախ՝ դատախազությանը զրկում է խոշտանգման վերաբերյալ հայտարարություններն անարձագանf թողնելու հնարավորությունից, fանի որ փաստաթղթերը գանգատվում են, որ իրենց և/կամ մեղադրյալի հայտարությունները շատ դեպքերում, հակառակ օրենքի պահանջի, որևէ արձագանf չեն ստանում: Մյուս կողմից, եթե դատախազը ան-գամ մերժի fրեական գործ հարուցելու մասին դատավորի միջնորդությունը, ապա այդ դեպքում կայացվում է fրեա-կան գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որը դատական կարգով կարող է բողոքարկվել:

Փաստաթղթերի հետ հանդիպումների ժամանակ վերջիններս նշեցին, որ հաճախ ամբաստանյալները դատական նիստերի ներկայանում են կապտուկներով: Մեր հարցի, թե երբևէ դատավորը անդրադառնո՞ւմ է դրանց, փոր-ձո՞ւմ է պարզել դրանց պատճառման հանգամանfները, պատասխանը միշտ բացասական է: Նման դեպքերում դատավորները չպետք է սպասեն, մինչև ամբաստանյալներն իրենf հայտարարեն, որ ենթարկվել են խոշտանգումների, այլ փորձեն հարցերով պարզել կապտուկների առաջացման պատճառները: Այս հարցը խիստ կարևոր նշանակու-թյուն ունի նաև խոշտանգմամբ ձեռf բերված ապացույցների անթույլատրելիության տեսանկյունից: Կոնվենցիայի 15-րդ հոդվածն այս կապակցությամբ սահմանում է՝ որևէ դատական հարցաքննության ընթացfում իբրև ապացույց չօգտագործվի որևէ հայտարարություն, որը, ինչպես պարզվել է, արվել է խոշտանգման ազդեցության տակ, բացի այն դեպքերից, երբ դա խոշտանգելու մեջ մեղադրվող անձի դեմ այդ հայտարարությունն արվելու ապացույց է հան-դիսանում[20]: Փաստաթղթերի, դատավորների և դատախազների հետ հարցազրույցներից պարզվեց, որ հազվադեպ են դեպfերը, երբ պաշտոնապես հաստատված է, որ ապացույցը ձեռf է բերվել խոշտանգման արդյունfում, և այդ փաստական տվյալները fրեական դատավարությունում դրվում են մեղադրական դատավճռի հիմքում: Նման եզակի դեպfերից է Միշա Հարությունյանի գործը, որում պաշտպանը վիճարկել է գործով մեղադրյալ Մ-ի և վկաներ Գ-ի

20 Այս հոդվածը իր արտացոլումն է գտել նաև ՀՀ fr. դատ. օր-ի 105-րդ հոդվածում, համաձայն որի՝ fրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնf ձեռf են բերվել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով:

և Կ-ի կողմից տրված ցուցմունքները՝ դրանց թույլատրելիության տեսանկյունից: Պաշտպանը պնդել է, որ վերջիններս այդ ցուցմունքները տվել են ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության ստորաբաժանման աշխատակիցների կողմից կիրառված խոշտանգումների արդյունքում, ինչի վերաբերյալ արդեն հարուցված քրեական գործի մասին վերջինս հայտնել է դատարանին: Պաշտպանության կողմի նման միջնորդությունների և վկաների տված ցուցմունքներին գնահատական տալով՝ դատավորի դատավճռի պատճառաբանական մասում նշվել է. «Դատարանը, գնահատական տալով Գ-ի, Կ-ի նախաքննության և դատաքննության ժամանակ տված հակասական ցուցմունքներին, գտնում է, որ իրականում հետաքննության մարմնի կողմից ռազմական ոստիկանության բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար»: Նման գնահատական տալով՝ դատավորը ընդունել է խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցները և դրել մեղադրանքի հիմքում, դրանով իսկ արդարացրել է նշված անձանց նկատմամբ իրականացված խոշտանգումները: Սույն դատավճիռը բողոքարկվել է վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ, որոնք դատական ակտը թողել են ուժի մեջ[21]:

Խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունն ապահովելու առումով հատկապես կարևոր է Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը նմանատիպ դեպքեր վկայակոչող բողոքները վարույթ ընդունելու հարցը քննելիս: ՀՀ օրենսդրությամբ թեև նախատեսվել է, որ վճռաբեկ բողոք կարող են բերել հավասարմագրված փաստաբանները, սակայն նրանց բերած բողոքները ևս պարտադիր կարգով ընդունման ենթակա չեն[22]: Օրենսդիրը սահմանել է բովանդակային կրկնակի զտիչ, ինչը հակասում է արդարադատության մատչելիության սահմանադրական սկզբունքին[23]:

ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքի միատեսակ կիրառումն ապահովող մարմնի նոր սահմանադրական կարգավիճակից հետո (27.11.2005 թ.) ձևավորված պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ Վճռաբեկ դատարանում չեն վերանայվել ՀՀ քր. օր-ի 341-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործեր, իսկ այլ բնույթի քրեական գործերի վերանայման ընթացքում, որպես կանոն, ՀՀ Վճռաբեկ դատարանում չեն բարձրացվել դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումներ կիրառելու վերաբերյալ հարցադրումներ[24]: Բազմաթիվ են վճռաբեկ բողոքները, որտեղ բարձրացված է բռնության կիրառման հետևանքով ինքնախոստովանական ցուցմունք կորզելու հանգամանքը, և դրա ընդունումը վարույթ մերժվում է, քանի որ «չի հիմնավորվել դատական սխալի ծանր հետևանքներ առաջացնելու փաստը»: Առավել զարմանալի էր վերջերս Վճռաբեկ դատարանի կողմից մերժված բողոքը մի գործով, որի մեղադրանքի հիմքում ընկած է երկու ապացույց՝ վկայի ցուցմունք և ինքնախոստովանություն: Ընդ որում, ի սկզբանե մեղադրյալը հայտարարել է, որ ինքնախոստովանությունը տվել է ծեծի, հոգեբանական ճնշման հետևանքով, իսկ վկան դատաքննության ընթացքում հայտարարել է, որ իրեն նախաքննության մարմինն է ասել, թե ինչ ցուցմունք տա, և որ ինքն այդ անձից երբևէ թմրամիջոց չի գնել: Այստեղ ավելանում է մեկ այլ կասկածելի ազդակ: Առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ձեռքբերումը իրացնելու նպատակով մեղադրանքի համար որպես կանոն առաջնային նշանակություն պետք է ունենա իրեղեն ապացույցը, այն է՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների առկայությունը տվյալ անձի տիրապետման ներքո: Մինչդեռ այս դեպքում անձը դատապարտվել է 9 տարվա ազատազրկման, քանի որ ինչ-որ մեկը հայտարարել էր, որ նա իրենից գնել է թմրադեղ, որից հրաժարվել էր դատաքննության ընթացքում: Դատարանը գտավ, որ վկան չարամիտ համաձայնության մեջ է մտել մեղադրյալի հետ, և հիմնվեց բացառապես ինքնախոստովանական ցուցմունքների վրա: Իսկ թե ինչպես դատարանը համոզվեց, որ խոսքը վերաբերում է առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցներին, անհայտ

21 Սույն գործով մարդու իրավունքների Եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, իսկ առաջին ատյանի դատարանի դատավորը ՀՀ Արդարադատության խորհրդի որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Harutyunyan v. Armenia, 28/06/2007 http://cmiskp.echr.coe.int/tkp197/portal.asp?sessionId=22529469&skin= hudoc-en&action=request

22 ՀՀ քր. դատ. օր-ի 414.2-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ 1) Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, 2) վերանայվող դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը, կամ 3) ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

23 ՀՀ Սահմանադրական դատարանում լսվում է հավասարմագրված փաստաբանների ինստիտուտի սահմանադրականության հարցը:

24 ՀՀ Վճռաբեկ դատարանը 2006 թ. դեկտեմբերի 22-ի որոշմամբ նախաքննության ընթացքում դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումներ կիրառելու մասին վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ նշել է. «Անհրաժեշտ է հանգամանորեն ստուգել նաև այդ օրերի ընթացքում ամբաստանյալներ Ռ.Սարգսյանի, Մ.Սերոբյանի և Ա.Զալյանի նկատմամբ բռնություններ կիրառելու, նրանց խոշտանգումների ենթարկելու մասին պաշտպանության կողմի բողոքներում բերված փաստարկները»

մնաց: Ավելին, կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում մեղադրյալը շտապօգնությամբ տեղափոխվել էր հիվանդանոց:

Եթե մինչև 27.11.2005 թ. ՀՀ սահմանադրական փոփոխությունները և դրանցից բխող օրենսդրական բարեփոխումները Վճռաբեկ դատարանը պարտադիր քննում էր վճռաբեկ բողոքները, ինչի արդյունքում պետք է արձագանքեր խոշտանգումների կիրառման մասին հայտարարություններին, ապա ներկայումս Վճռաբեկ դատարանը, ունենալով վարույթ ընդունելու կամ չընդունելու հնարավորություն, առանց պատշաճ պատճառաբանության բողոքները վարույթ չի ընդունում: Ավելացնենք, որ դեռևս որևէ դատավոր չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության ակնհայտ հիմնավոր վճռաբեկ բողոքը կամայականորեն վարույթ չընդունելու համար:

Եթե վճռաբեկ բողոք բերող անձը դրանում բարձրացնում է դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգում կիրառելու ողջամիտ կասկած հարուցող հանգամանքներ, որոնք ստորադաս դատարանում գնահատականի չեն արժանացել, ապա նման բողոքը պետք է ընդունել վարույթ այն հիմքով, որ ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Վճռաբեկ դատարանի պալատը առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի այն դեպքերին, երբ բժշկական փաստաթղթերով հաստատվում է կալանավորված կամ ձերբակալված անձանց մարմնական վնասվածքների առկայությունը:

## 2. || Դատարանը՝ որպես պատշաճ քննության երաշխավոր

Կոնվենցիայի 12-րդ և 13-րդ հոդվածների համաձայն՝ *անձը պետք է իրավունք ունենա իր նկատմամբ կիրառված խոշտանգման յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու, իսկ վերջիններս պարտավոր են անհապաղ և անաչառ հետաքննություն իրականացնել:* Կոնվենցիան հորդորում է իրավապահ մարմիններին ցուցաբերել պրոակտիվ մոտեցում. նախաձեռնել հետաքննություն ցանկացած դեպքում, երբ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ անձը ենթարկվել է խոշտանգման: Կոմիտեի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոմիտեն կարող է «ձեռնպահ» մնալ հայտարարելու՝ եղե՞լ է խոշտանգում, թե՞ ոչ: Հիմնվելով առանձին ազդակների վրա, նախ՝ հանգում է եզրակացության, որ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու խոշտանգման կիրառման փաստը, ապա՝ մասնանշելով ասենք՝ իրավապահ մարմինների կողմից օրենսդրությանը համապատասխան ընթացք չի տրվել կալանավորված անձի վիճելի բողոքին, թերացել են հետաքննություն իրականացնելու հարցում և նման հետաքննության միջոցով չեն պարզել կալանքի տակ գտնվող անձանց՝ ոստիկանության հսկողության տակ գտնվելու ընթացքում ստացած վնասվածքների առաջացման պատճառները և այլն, Կոմիտեն արձանագրում է, որ խախտվել են Կոնվենցիայի 12-րդ և (կամ) 13-րդ հոդվածները, և չի իրականացվել պատշաճ քննություն: Նմանապես դատարանը ՀՀ-ում իրավազոր է վերացնել քրեական հետապնդման մարմնի կողմից կայացված քրեական գործի հարուցումը մերժելու կամ հարուցված քրեական գործը կարճելու մասին որոշումները: Հարկ է նկատել, որ մինչ օրս դատարանը միայն մեկ անգամ չի համաձայնել քրեական հետապնդման մարմնի հետ և պարտադրել է դատախազին քրեական գործ հարուցել խոշտանգման փաստով:

### *Խոշտանգումների մասին հայտարարությունների պատշաճ քննության ինստիտուցիոնալ խնդիրները*

Ստացված հաղորդումների ստուգման և քննության որակը գնահատելիս դատարանը պետք է հաշվի առնի, նախ, դրանց քննության ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, պրակտիկայում այս կամ այն եզրակացության ապացուցողական արժեքը, կարգապահական, քրեական պատասխանատվություն փոխհարաբերությունը: Այս առումով, խոշտանգումների մասին հայտարարությունների պատշաճ քննության պահանջը ի սկզբանե վտանգված է իրավապահ մարմինների համակարգի կառուցման այնպիսի պայմաններում, երբ խոշտանգումների մասին հայտարարությունը պետք է քննվի միևնույն գերատեսչության շրջանակներում, որի պաշտոնատար անձի կողմից թույլ է տրվել ենթադրյալ խոշտանգումը: ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումների ընթացքում ՀՀ դատախազության համակարգից հանվեց քննչական ապարատը: Դատախազությունն այսուհետ կարող է առավել

անկաշկանդ հսկողություն իրականացնել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Միևնույն ժամանակ ՀՀ քր. դատ. օր-ի 2007թ. դեկտեմբերի 18-ի փոփոխություններով և լրացումներով՝ դատախազը զրկվել է քննիչի գործողությունների վերաբերյալ ստացված տարաբնույթ դիմում-բողոքների ստուգման նպատակով բողոք բերող անձից բացատրություններ ստանալու լիազորությունից: Եթե դատախազին հասցեագրված բողոքում դատավարության մասնակիցը նշում է, որ հարցաքննության ժամանակ քննիչի կողմից կիրառվել են անօրինական միջոցներ, ապա դատախազը զրկված է բողոքում նշված տեղեկությունների հավաստիության ստուգման նվազագույն հնարավորությունից (օրինակ՝ բողոքում նշված փաստերի վերաբերյալ բացատրություն վերցնել հարցաքննության մասնակցից կամ նրա փաստաբանից): Նման դեպքում դատախազը պարտավոր է խոշտանգման մասին յուրաքանչյուր հայտարարություն, անկախ դրա հավաստիության բնույթից, դիտարկել որպես հանցագործության մասին հաղորդում և ուղարկել ըստ ենթակայության: ՀՀ քր. դատ. օր.ի 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հատուկ պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների գործերով նախաքննություն իրականացնում են հատուկ քննչական ծառայության քննիչները: Հետևաբար, քննիչների հանցավոր գործողությունների, այդ թվում՝ խոշտանգումների վերաբերյալ գործերը քննում է հատուկ քննչական ծառայությունը[25]: Հաշվի առնելով այն չգրված կանոնը, որ դատավոր-դատախազ սուբյեկտները օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ոլորտում միմյանց լրացնում են, դատախազի իրավասությունների պակասեցումը, ենթադրվում է, պետք է լրացվի դատարանի էլ ավելի ակտիվ գործունեությամբ: Ուստի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելիս դատարանը պետք է հաշվի առնի, որ դատախազը այդպես էլ հնարավորություն չի ունեցել բացատրություններ վերցնելու, ասենք՝ քննիչի անօրինական գործողությունների առնչությամբ, և ձեռնարկելու լրացուցիչ միջոցառումներ հաղորդման ստուգման որակը գնահատելու ուղղությամբ: ՀՀ քրեական դատավարության ընթացքում քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական մեթոդներ կիրառելու վերաբերյալ դատախազությանը հասցեագրված դիմում - բողոքներում բարձրացված հարցերի հավաստիությունը արագ և արդյունավետ ստուգելու և քրեադատավարական օրենքով նախատեսված համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով դատախազությանը պետք է վերապահվի ներկայացրած անձանցից, ոստիկանության աշխատակիցներից բացատրություններ վերցնելու լիազորություն[26]: Եթե դատախազը դիմումում բարձրացված հարցերի ստուգման ընթացքում պարզի, որ քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի կողմից կիրառված անօրինական մեթոդները պարունակում են հանցակազմի տարրեր, ապա նյութերը պետք է ուղարկի հատուկ քննչական ծառայություն՝ արդեն հանցագործության փաստով քննություն անցկացնելու նպատակով:

### *Ծառայողական քննությունը՝ որպես խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններով քննության ձև*

Դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումներ կամ այլ անօրինական մեթոդներ կիրառելու վերաբերյալ դիմումներ ստանալով՝ գերատեսչության ղեկավարները դրանցում բարձրացված հարցերը ստուգելու և պատշաճ քննություն անցկացնելու նպատակով դատախազին կամ Հատուկ քննչական ծառայություն ուղարկելու փոխարեն նշանակում են, այսպես կոչված, ծառայողական քննություններ: Օրինակ՝ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող «Սինկրիսալ» ԲԲԸ աշխատակիցների վերաբերյալ քրեական գործով ամբաստանյալ, ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում պահվող կալանավոր Գ. Բդդոյանի նկատմամբ անվտանգության աշխատակիցների կողմից բռնություն կիրառելու հայտարարության կապակցությամբ, մինչև սույն քրեական գործի հարուցումը ՀՀ արդարադատության նախարարի 25.04.2007թ. հրամանով նշանակվել է ծառա-

25 ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 26.2-րդ կետի՝ համաձայն հատուկ պետական ծառայություն իրականացնող անձ են համարվում նաև ոստիկանության, ազգային անվտանգության, հարկային, մաքսային մարմինների աշխատակիցները:

26 Օրինակ՝ հարուցված քրեական գործով մեղադրյալը տվել է ինքնախոստովանական ցուցմունք, որից հետո դիմում է ներկայացրել դատախազություն հետևյալ բովանդակությամբ. «Հանգամանքներից դրդված ստորագրել եմ քննիչի կողմից գրված իրականությանը չհամապատասխանող ինքնախոստովանական ցուցմունքի տակ: Պարզաբանում եմ՝ ստորագրելուն եղել են լուրջ պատճառներ ոչ միայն քննչական մարմինների կողմից, այլև քրեական հետախուզական բաժնի աշխատակիցների կողմից կոպիտ կերպով խախտվել են սահմանադրական նորմերը: Ոչ ճիշտ ցուցմունքի տակ ստորագրելու պատճառները հիմնավոր կնշեմ ապացույցներով հետագա քննության ընթացքում»: Նշված դեպքում դատախազը պետք է հնարավորություն ունենա անմիջապես լսելու մեղադրյալին, ձեռք բերված տեղեկությունները համադրելու գործի նյութերի հետ, որից հետո լուծելու դիմումի հետագա ընթացքը:

յողական քննություն, որով չհաստատվեց Գ. Բղդոյանի նկատմամբ բռնություն գործադրելու և նրան մարմնական վնասվածք պատճառելու հանգամանքը:

Ծառայողական քննությունը որպես գործունեության ինքնուրույն տեսակ կարգավորված չէ օրենքով, իսկ եթե գերատեսչական ակտերը այս կամ այն կերպ կարգավորում են ծառայողական քննության իրականացման կարգը, ապա դրանք մատչելի չեն և չեն հրապարակվում[27]: «Ծառայողական քննությունները» ըստ էության ներգերատեսչական ստուգումներ են, որոնց արդյունքները հիմք են պետական ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Անթույլատրելի է ձևավորված այն պրակտիկան, երբ խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններով՝ ծառայողական քննությունները փոխարինում են ՀՀ քր. դատ. օր-ով սահմանված դատավարական ձևի շրջանակներում իրականացվող քննությանը: Դատախազի բազմաթիվ որոշումներում, որտեղ քրեական գործի հարուցումը մերժվել է, կամ քրեական գործի վարույթը կարճվել է, պարտադիր կերպով նշվում է, որ իրականացվել է ծառայողական քննություն, որի արդյունքում չի հաստատվել խոշտանգման փաստը: Ծառայողական քննության արդյունքում կազմված գերատեսչական ակտը ձեռք է բերում անհերքելի ապացույցի ուժ, ինչը, փաստորեն, ենթակա չէ բեկանման և չի ստուգվում այլ ապացույցների հետ համադրությամբ և քննությամբ: Բղդոյանի գործով ծառայողական քննությունը պարզեց, որ «ձերբակալվելիս, իսկ ապա կալանավորվելիս, համապատասխանաբար ձերբակալվածների պահման վայր (ԶՊՎ) և քրեակատարողական հիմնարկ /ՔԿՀ/ ընդունվելու և տեղափոխվելու ժամանակ Բղդոյանն անցել է բուժզննում, որի ընթացքում նրա մարմնի վրա վնասվածքների հետքեր չեն հայտնաբերվել: Նա իր առողջական վիճակից չի գանգատվել: Մի քանի օր անց Բղդոյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, ախտորոշվել է աջակողմյան սպոնտան պնևմոթորաքսե հիվանդությունը: Նախաքննության ընթացքում Գ. Բղդոյանը ցուցմունք էր տվել առ այն, որ իր մոտ հիվանդությունն առաջացել է ՀՀ գլխավոր դատախազությունում իր ձերբակալման օրը հատկապես կարևոր գործերով (ՀԿԳ) քննիչ Ա-ի կողմից իր աջ թևատակին բռունցքով մեկ անգամ հարվածելու հետևանքով, ինչի մասին նա ոչ մեկին չի տեղեկացրել»: Հանցակազմի բացակայությունը հիմնավորելու նպատակով դատավարական փաստաթղթում նշված է. 1. Քննիչն իր ցուցմունքներում նշել է, որ Գ. Բղդոյանի հետ երբևէ չի վիճաբանել, նրան չի վիրավորել, չի հարվածել, և այդ մասին Բղդոյանի հայտարարությունը հիմնազուրկ է: 2. Գ. Բղդոյանի նկատմամբ բռնություն գործադրելու, նրան մարմնական վնասվածք պատճառելու և դրա հետ կապված մի շարք հանգամանքներ պարզելու նպատակով քրեական գործով նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Գ. Բղդոյանը հրաժարվել է փորձագետների կողմից զննվելուց: Վերջիններս, հիմնվելով նրա հիվանդությանը վերաբերող փաստաթղթերի վրա (հիվանդության պատմություն, ռենտգեն նկարներ և այլն), տրված եզրակացության արդյունքներով հերքել են հիվանդության առաջացումը բռնություն կիրառելու հետևանքով:

Վերը նշված դեպքը դասական օրինակ է, երբ դատախազը, հիմնվելով բացառապես ծառայողական քննության եզրակացության վրա, չի անդրադառնում այն հանգամանքներին, թե ինչու է մեղադրյալը հրաժարվել անցնել այդ փորձաքննությունը (չի վստահել նշանակված փորձագետներին), հնարավո՞ր է միայն էպիկրիզի հիման վրա հանգել տվյալ եզրակացության, ինչպե՞ս եղավ, որ քրեակատարողական հիմնարկ բերելիս Գ. Բղդոյանի մոտ որևէ բռնության հետք չէր գրանցվել և այլն:

Նմանապես, ոստիկանության բաժանմունքներում դժբախտ պատահարների առնչությամբ փաստաբանները, իրավապաշտպան կազմակերպությունները հայտարարում են, որ, որպես կանոն, քրեական հետապնդման մարմինը սկզբից ևեթ առավելապես կողմնորոշված է լինում միայն դժբախտ պատահարի վարկածը հաստատելուն, ինչի հետևանքով անուշադրության են մատնվում կամ արհամարվում տրամաբանորեն ենթադրվող և՛ տուժողի իրավահաջորդի, և՛ նրա ներկայացուցիչների կողմից առաջ քաշված այլ վարկածները և դրանք հիմնավորող ապացույցները:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի՝ Վանաձորի գրասենյակի տնօրեն Ա. Սաքունցը մեզ տեղեկացրեց, որ 2008 հունվարին հաղորդում էր ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղ ահազանգել էր մի շարք քրեական գործերով իրականացվող քննության ընթացքում իրավապահների կողմից կիրառված խոշտանգումների մասին: Դրանցից հատկապես աղմկալից էին Լոռու մարզի դատախազի սպանության, Վանաձորի առևտրային կենտրոնի գողության գործով քննության ընթացքում կիրառված բռնությունները (Հելսինկյան քաղաքացիական

27 Այդ ակտերը տեղադրված չեն «ԻՐՏԵԿ» իրավական տեղեկատվական համակարգում, որտեղ տեղադրվում են պաշտոնապես հրապարակված բոլոր ակտերը:

ասամբլեայի՝ Վանաձորի գրասենյակ, Հելսինկյան ասոցիացիա): Դասախազությունից ստացված դասասխա-նում կրկին ասվում է. «Քրեական գործի fննության ընթացfում կիրառված բռնությունների կադակցությամբ ծա-ռայողական fննություն է իրականացվել ՀՀ ոստիկանության ներfին անվտանգության վարչության աշխատակից-ների կողմից: Օդերլիազորը ենթարկվել է կարգադահական տույժի, ևս երկու աշխատակիցների հարցը fննարկվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություններում: Ինչ վերաբերում է բռնություններ կիրառմանը, ապա լրացուցիչ տվյալներ ձեռf չեն բերվել»: Մեկ այլ գործով՝ դասախազությունը տեղեկացրեց դ-ն Սաfունցին, որ հա-րուցվել է frեական գործ ՀՀ fr. or-ի 341-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (խոշտանգմամբ ցուցմունf կորզե-լու հանցակազմ), սակայն fննության ընթացfում frեական գործի վարույթը կարձելու մասին որոշում է կայացվել հանցագործության դեպfի բացակայության հիմfով: Բացի այդ, խոշտանգումների մասին հայտարարությունների մի զգալի զանգված մնում է անհետևանf, դրանց վերաբերյալ չի անցկացվում պատշաճ fննություն[28]: Մի գործով frեական գործի հարուցումը մերժելու, մեկ այլ դեպfում՝ հարուցված գործը կարձելու դասախազության որոշումնե-րը չեն բողոքարկվել դատարան:

Հարցազրույցների ժամանակ իրավապաշտպան կազմակերպությունները բարձրացրին երկու խնդիր.

1. Դատարանների նկատմամբ վստահության պակասը: Տուժողները ստվար զանգվածը խուսափում է իրավա-պահ մարմիններից, իսկ ՀՀ դատական համակարգն ընկալվում է ոչ թե որպես իշխանության անկախ թև, այլ դատական զերատեսչություն:
2. Իրավապաշտպան կազմակերպությունները չեն կարող բողոքարկել, ասենf, frեական գործով վարույթը կար-ձելու մասին որոշումը, fանի որ չեն հանդիսանում տուժող և օժտված չեն նման լիազորությամբ:

Հիմնվելով Կոմիտեի կողմից fննված գործերի, ինչպես նաև այս հետազոտության ընթացfում մեզ տրամադրված գործերի վերլուծության վրա՝ կարող ենf առանձնացնել հետևյալ ազդակները, որոնց հասկապես ուշադրություն պետf է դարձնի դատարանը: Դրանցից մեկի կամ մի fանիսի առկայությունը կարող է դիտվել իբրև խոշտանգում-ների կիրառման հիմf և հնարավորություն տալ դատարանին՝ եզրահանգելու, որ ստացված հաղորդումը պատշաճ չի ստուգվել, կամ դեպfի առնչությամբ պատշաճ fննություն չի իրականացվել, ինչի հետևանfով frեական գործով վարույթը կարձվել է:

- Բժշկական փաստաթղթեր (էպիկրիզ), ինչպես նաև ցանկացած բժշկական եզրակացություն առ այն, որ ենթադրյալ զոհը պետf է ստացիոնար բուժում անցնի հիվանդանոցում:
- Իրեղեն ապացույցներ, ասենf՝ նկարներ, որտեղ անձը ծեծված է:
- Այլ անձանց վկայությունը առ այն, որ անձը ենթարկվել է խոշտանգման: Բժշկական եզրակացության բացակայության դեպfում մոր, frոջ կամ այլ անձի կողմից գրավոր վկայություն է ներկայացվել, որ մինչև ոստիկանության բաժանմունf գնալը «զոհը» եղել է ֆիզիկապես նորմալ վիճակում, մինչդեռ վերադառ-նալիս՝ բռնության հետfերով[29]:
- Անուղղակի ապացույցներ, մասնավորապես իրավապաշտպան կազմակերպության հայտարարություն-ները, որոնf, անցկացնելով հասարակական հետաfննություն, զրուցել են տուժողների և վկաների հետ: Այս կազմակերպությունների վկայությունները կարևոր նշանակություն ունեն, fանի որ տուժողները կամ վկա-ները հաճախ խուսափում են ոստիկանություն սեփական նախաձեռնությամբ ներկայանալուց[30]:

28 Խոշտանգման վերաբերյալ հայտարարություններ հաճախ արվում են մամուլում, որոնf ՀՀ frեական դատավարության oրենսգրfի համաձայն դիտվում են frեական գործ հարուցելու առիթ: 2007թ. հոկտեմբերի 3-ի «ՀՀ կոլեգիայի որոշումներում, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների առանձին հանձնարարականներում փոփոխություններ մտցնելու մասին» որոշման 1.10-րդ կետով մարզերի, Երևան fաղաfի, համայնfների և կայազորների դատախազներին հանձնարարվել է կատարված հանցագործությունների, տեղ գտած օրինախախտումների մասին մամուլի հրապարակումների վերաբերյալ անհապաղ զեկուցել ՀՀ գլխավոր դատախազին՝ հետագա ընթացf տալու համար: Պարբերաբար ստուգել այդ հանձնարարությունների կատարումը և կիսամյակը մեկ վերլուծությունների արդյունfները ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին: 2008 թ. մայիսի 5-ին ՀՀ գլխավոր դատախազը կրկին ցուցում է տվել օրինախախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումների մասին անհապաղ զեկուցելու վերաբերյալ:

29 Mr. Dragan Dimitrijevic v Serbia and Montenegro, CAT/C/33/D/207/2002, 29 November 2004.

30 http://www.hahr.am/index.php?option=com–content&task=view&id=86&Itemid=40Իրավապաշտպան Միfայել Դանիելյանը ԶԼՄ-

- Առանց փաստաբանի մասնակցության հարցաքննություն: Պետք է պարզել՝ տեղեկացե՞լ է անձը իր կողմից հրավիրված փաստաբանի մասնակցությամբ հարցաքննվելու իր իրավունքի մասին: Ընդհանուր առմամբ, նախնական քննությանը փաստաբանի մասնակցությունը նվազեցնում է նրա վստահորդների կամ պաշտպանյալների նկատմամբ բռնություններ, խոշտանգումներ կիրառելու հնարավորությունը: Սակայն փաստաբանի մասնակցությունը ինքնին չի բացառում խոշտանգում կիրառելու փաստը: Օրինակ՝ Վճռաբեկ դատարանի պալատը նշել է. «Բողոքում բերված այն պատճառաբանությունը, որ խոստովանական ցուցմունքները դատապարտյալներից կորզվել են քննության խորթ մեթոդների կիրառմամբ անհիմն են և չեն բխում գործի նյութերից, քանի որ թե՛ Փիլիպոսյանը, թե՛ Սարգսյանը պաշտպաններով ապահովված են եղել նախաքննության հենց սկզբից, և բոլոր ցուցմունքները նրանք տվել են պաշտպանների ներկայությամբ: Վերջիններս մասնակցել են նաև քննչական փորձարարությանը, և նրանց կողմից որևէ ահազանգ, որ իրենց պաշտպանյալների նկատմամբ կիրառել են բռնություն, չի եղել»[31]: Մեկ այլ դեպքում՝ Վճռաբեկ դատարանի պալատը նշել է, որ դատարանն իրավացիորեն ճիշտ է համարել Վ. Մարգարյանի՝ ամբողջ նախաքննության ժամանակ, նաև իր պաշտպանի ներկայությամբ տված ցուցմունքները[32]: Անվիճելի է, որ ձերբակալվածի (կասկածյալի)՝ պաշտպան ունենալու իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքներից ամենահիմնականն է, սակայն, կարծում ենք, չպետք է բացարձականացնել նախնական քննությանը պաշտպանի մասնակցության հանգամանքը, և դրանով իսկ առհասարակ բացառել դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումներ կիրառելու հնարավորությունը: Հատկապես պետք է հաշվի առնել, որ եթե կասկածյալը կամ մեղադրյալը ձերբակալված կամ կալանավորված են, ապա նրանց նկատմամբ խոշտանգումներ կարող են կիրառվել նաև մինչև դատավարական գործողություններ կատարելը կամ դրանից հետո, այն ժամանակ, երբ պաշտպանը բացակայում է: Խնդիրն այն է, որ անօրինական մեթոդներ, որպես կանոն, կիրառում են ոչ թե քննիչները, այլ օպերատիվ աշխատակիցները և ոչ թե քննչական գործողությունների ընթացքում, այլ դրանից առաջ կամ հետո: Դեռևս արդիական է մնում ազատությունից զրկված կամ ազատության մեջ գտնվող կասկածյալների, մեղադրյալների հետ օպերատիվ աշխատակիցների, քննիչների ոչ դատավարական հանդիպումների իրավաչափության և թույլատրելիության հարցը:

- Ենթադրյալ զոհը ապօրինի պահվել է բաժանմունքում, չունենալով որևէ կարգավիճակ և առանց որևէ դատավարական փաստաթղթի, կամ խախտվել են ազատության մեջ պահելու ժամկետները[33]:

- Ոստիկանի անօրինական գործողությունները, օրինակ՝ առանց խուզարկություն իրականացնելու թույլտվության ոստիկանները մտնում են բնակարան, և կասկածյալը «իրեն պատուհանից դուրս է նետում»[34]:

- Վկայի բացակայությունը, որը կհաստատի, որ անձը դժբախտ պատահարի արդյունքում է մահացել[35]:

- Հատկապես «դժբախտ պատահարների» դեպքում պետք է հաշվի առնել զոհվածի մինչ այդ դրսևորած վարքագիծը, մասնավորապես իրավապահ մարմինների հետ համագործակցելը, հարցաքննություններին տարբերաբար ներկայանալը, ինչը որոշակի առումով բացառում է նրա կողմից փախուստի դիմելու, ինքնասպանություն կատարելու վարկածները և այլն:

- Ոստիկանության կողմից դեպքի առնչությամբ չեն հարցաքննվել պատահարի բոլոր ականատեսները:

---

ով հայտարարություն է արել այն մասին, որ Վանաձորի դատախազի սպանության գործով դատախազություն բերման են ենթարկվել մի քանի տասնյակ մարդիկ և պահվել այնտեղ 3-4 օր: Հայտարարությունում Մ. Դանիելյանը հավելեց, որ ունի 29-ամյա Կ. Դ-ի նկարները, նա ծեծված է: Իրավապաշտպանը զրուցել է նաև մատուցող 21-ամյա Ա. Ն-ի հետ, որին «նույնպես ծեծել են դատախազությունում, և ով նույնիսկ իրավապաշտպանի հետ զրուցելիս վախից լաց էր լինում: Մատուցողուհի Ա. Թ-ին չէին ծեծել, սակայն հայհոյել էին և սպառնացել: Պահել էին երեկոյան 11-ից մինչև գիշերվա 1-ը: Մեկ այլ մատուցողուհու՝ Ս. Փ-ին արդեն ծեծել էին, և դա արել էր Վանաձորի դատախազության քննիչ Մ-ն»,-իր խոսքն ամփոփեց Հելսինկյան ասոցիացիայի նախագահը:

31 ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, (2000-2001թթ.), հատ. երկրորդ, էջ 196:

32 ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, (2000-2001թթ.), հատ. երկրորդ, էջ 180:

33 Mr. Danilo Dimitrijevic v Serbia and Montenegro, CAT/C/35/D/172/2000, 29 November 2005.

34 Mr. Slobodan Nikolić; Mrs. Ljiljana Nikolić v Serbia and Montenegro, CAT/C/35/D/174/2000, 9 December 2005.

35 Slobodan Nikolić; Mrs. Ljiljana Nikolić v Serbia and Montenegro, CAT/C/35/D/174/2000, 9 December 2005.

- Հարցաքննությանը մասնակցել են օպերատիվ աշխատողներ, որոնց մասնակցությունը չի պահանջվում դատավարական օրենքով:
- Խոշտանգումներ, բռնություն կիրառելու հայտարարությունները հաճախ արվում են իրավապահ մարմին-ների միևնույն աշխատակիցների դեմ:
- Հայտարարություններում նշվում են կոնկրետ անուններ, որոնք մասնակցել են խոշտանգումներին[36]:
- Դատախազի որոշումը բացառապես հիմնվում է ծառայողական քննության արդյունքում կազմ-ված եզրակացության վրա, բազմակողմանի և համալիր չեն ուսումնասիրվել գործում եղած բոլոր ապացույցները:
- Ծառայողական քննությունը իրականացվել է արդեն իսկ որոշ ձգձգումներով:
- Ծառայողական քննության արդյունքում կարգապահական տույժի են ենթարկվել ի սկզբանե ահազանգած բռնությունների հետ որևէ առնչություն չունեցող անձինք, ինչը արդեն վկայում է, որ վերջինս նպատակ է ունեցել «ազատել» պատասխանատու պաշտոնատար անձանց:

Առանձին գործերով կարող են առկա լինել վերը նշված ազդակներից միաժամանակ մի քանիսը: Ոստիկանության բաժանմունքում մահացած Գուլյանի վերաբերյալ ոստիկանության վարկածը հետևյալն էր՝ նա մահացել է, երբ փախուստի փորձ անելիս ընկել է ոստիկանության շենքի երկրորդ հարկի պատուհանից: Մինչդեռ գործի հանգա-մանքների վերլուծությունը ի հայտ է բերում վերը նշված հանգամանքների պրակտիկ դրսևորումը: Այսպես՝ մինչև «դժբախտ պատահարը» վկան ակտիվ համագործակցել է իրավապահ մարմինների հետ, մի քանի անգամ ներկա-յացել հարցաքննության: Նա ապօրինի պահվել է անազատության մեջ, ընդհուպ մինչև գիշերել ոստիկանության բաժանմունքում: Բարեկամները վկայում են, որ նրա նկատմամբ կիրառվել է բռնություն, նշվում են կոնկրետ աշխա-տակիցների անուններ: Իրեն զցելիս որևէ ականատես վկա չի եղել: Հարցաքննվել է առանց փաստաբանի: Այս ամենով հանդերձ՝ դատախազության կողմից կարճվել է քրեական գործով վարույթը:

Դատարանը քննության որակը գնահատելիս պետք է ուշադրություն դարձնի վերը նշված հարցերին: Սրանք ազդակներ են, որոնք դատավորին պետք է ուղղորդեն խոշտանգումների փաստով քրեական գործ հարուցելու միջնորդությամբ քրեական հետապնդման մարմնին դիմելիս, խոշտանգման փաստով քրեական գործի հարուցումը մերժելու կամ վա-րույթը կարճելու որոշումները վերացնելիս:

***Եզրակացություն***

***Դատարանները դատավարության մասնակցի նկատմամբ խոշտանգում կիրառելու մասին կասկածների օբյեկտիվ հատկանիշների առկայության դեպքում (օրինակ՝ ամբաստանյալի դեմքի վրա վնասվածքների առկայություն) հաճախ նախաձեռնող չեն լինում այդ խնդիրը քննարկման առարկա դարձնելու հարցում:***

***Գործնականում թեև հազվադեպ, բայց հանդիպում են դեպքեր, երբ պաշտոնապես հաստատ-ված է, որ ապացույցը ձեռք է բերվել խոշտանգման արդյունքում, սակայն այդ փաստական տվյալները դրվում են մեղադրական դատավճռի հիմքում:***

***Իրավակիրառ պրակտիկայում վկաների կամ դատավարության այլ մասնակիցների կողմից ցուցմունքները խոշտանգմամբ կորզելու հայտարարության կապակցությամբ ձևավորվել է այդ սուբյեկտների գրպարտության կանխավարկածը, որի պայմաններում խոշտանգման մասին հայտարարությունները հերքվում են ոչ հստակ պատճառաբանություններով:***

36 http://www.hahr.am/index.php?option=com–content&task=view&id=86&Itemid=40, www. panorama.am

## 3. Կոնվենցիայի ուսուցումը դատավորների և իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման դասընթացներում

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որ խոշտանգումների արգելքին վերաբերող ուսումնական նյութերն ու տեղեկատվությունն ամբողջովին ընգրկվեն իրավապահ մարմինների, քաղաքացիական, ռազմական անձնակազմի, պետական պաշտոնատար անձանց և այլոց նախապատրաստական ծրագրերում, ովքեր կարող են կապ ունենալ ձերբակալության, կալանքի կամ բանտարկության ցանկացած ձևի ենթարկված մարդկանց կալանելու, հարցաքննելու կամ նրանց հետ վերաբերվելու հետ: Յուրաքանչյուր մասնակից պետություն խոշտանգումների արգելքը մտցնում է պաշտոնատար անձի պարտականությունների ու գործառույթներին վերաբերող կանոնների կամ հրահանգների մեջ:

ՀՀ-ում իրավաբանական կրթությունն անցկացվում է երկու տեսակ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝

1. ընդհանուր բարձրագույն ուսումնական հաստատություններ (Երևանի պետական համալսարան, Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարան, Հայաստանում Ֆրանսիական համալսարան և այլն),
2. հատուկ բարձրագույն ուսումնական հաստատություններ (ՀՀ ոստիկանության ակադեմիա և այլն):

Բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբանական ֆակուլտետների ուսումնական առարկայական ծրագրերի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ նշված հաստատությունների բակալավրիատի ուսումնական ծրագրերում ընդգրկված է «Մարդու իրավունքներ» հատուկ դասընթացը, որի առարկայական ծրագրերում «Խոշտանգումների արգելքը» ներառված է «Անձնական իրավունքներ» թեմայում, իսկ վերջինիս հատկացվում է, որպես կանոն, 2-4 ակադեմիական ժամ: Նշված կարճ ժամանակը հնարավորություն չի տալիս համակողմանիորեն ներկայացնելու խոշտանգումների արգելքի հիմնական խնդիրները: Ուսումնական գործընթացում առկա այդ բացի լրացումը առավել, քան անհրաժեշտ է, երբ խոսքը վերաբերում է դատավորների և իրավապահ մարմինների աշխատակիցների պաշտոնում հավակնող թեկնածուների ուսուցմանը, ինչպես նաև գործող դատավորների և իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստմանը:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի ընթացքում դատավորների և դատախազների վերապատրաստման արդյունավետ իրականացման նպատակով հիմնադրվեցին «Դատական դպրոց» և «Դատախազության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները: Վերջիններիս 2008 թ. ուսումնական ծրագրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ծրագրերում ընդգրկված չէ խոշտանգումների դեմ պայքարի վերաբերյալ հատուկ դասընթաց: Ընդ որում, եթե նշված ծրագրերում նախատեսված են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների վերաբերյալ դասընթացներ, ապա Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ (խոշտանգումների արգելք) հատուկ դասընթացը բացակայում է: Նշված դպրոցներում չեն դասավանդվում նաև խոշտանգումների արգելքի վերաբերյալ ՄԱԿ-ի փաստաթղթերը և դրանց մեկնաբանությունները: Մինչդեռ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջների լիարժեք իրականացումը թելադրում է դատավորների (թեկնածուների) վերապատրաստման դասընթացներում Կոնվենցիայի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների փոխանցում:

Առաջարկվում է դատավորների և իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման դասընթացների ծրագրերում անհրաժեշտաբար նախատեսել «Խոշտանգումների արգելքը միջազգային իրավունքում» վերտառությամբ դասընթաց, որի շրջանակներում կներկայացվեն խոշտանգումների արգելքի վերաբերյալ միջազգային բոլոր հիմնական փաստաթղթերը և համապատասխան դատարանների, իրավասու մարմինների նախադեպային իրավունքը: Նման դասընթացի առկայությունը էլ ավելի է կարևորվում Կոնվենցիայի ոչ ճշգրիտ իմպլեմենտացիայի պայմաններում՝ դատավորներին հստակ ցույց տալով Կոնվենցիան ուղղակիորեն կիրառելու ուղիները, օրի-

նակ՝ ապացույցների անթույլատրելիության, դատական քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս, զոհերին փոխհատուցում սահմանելիս և այլն:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի ընթացքում մի շարք գերատեսչություններում ստեղծվեցին քննչական վարչություններ, բաժիններ (օրինակ՝ հարկային ծառայությունում, ՀՀ պաշտպանության նախարարությունում), կամ որպես ինքնուրույն պետական մարմին հիմնադրվեց Հատուկ քննչական ծառայությունը: Ներկայումս լուծված չեն այդ գերատեսչություններում քննիչների՝ խոշտանգումների դեմ պայքարի ոլորտում վերապատրաստման ինստիտուցիոնալ հիմնախնդիրները: Օրինակ՝ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում ամրագրված է քննիչների վերապատրաստման պահանջը, սակայն ներկայումս նշված պետական մարմնի համակարգում բացակայում է վերապատրաստում իրականացնող հիմնարկը:

***Եզրակացություն***

***Բուհերի իրավաբանական ֆակուլտետներում խոշտանգումների արգելքին հատկացված ոչ բավարար ժամանակը հնարավորություն չի տալիս խորությամբ անդրադառնալու թեմայի խնդիրներին, իսկ դատավորների և իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման ծրագրերում նախատեսված չէ խոշտանգման արգելքի մասին առանձին դասընթաց:***

# Առաջարկություններ

### Orենսդրին

1. Կոնվենցիայի իմպլեմենտացիոն գործընթացի նկատմամբ դրսևորել համալիր և համակարգված մnstեցում՝ բացառելով դրա դրույթների ֆրագմենտային իրացումը ՀՀ ներrմեsական orենսդրության մեջ:

2. ՀՀ fr. or-ի «Պեsական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում նախաsեսել խոcsանգումների այնպիսի հանցակազմ, որը կպարունակի Կոնվենցիայով ամրագրված խոcsանգումների հաsկանիշները: Հաsուկ ուշադրություն դարձնել ***բռնություն, առողջությանը ծանր վնաս պաsճառել, խոշsանգում*** կաsեգորիաների կիրառմանը frեական orենսգrfում, ապահովել դրանց ծանրությանը համարժեք frեական fաղաfականություն, sարբերակված sանկցիաներ:

### Դաsարանին

3. Ցուցաբերել նախաձեռնող (պrոակsիվ) մnsեցում և fննարկման առարկա դարձնել ցանկացած դեպfում, երբ առկա են բավարար հիմfեր՝ ենթադրելու, nr անձը ենթարկվել է խոcsանգման: Բացառել խոcsանգմամբ ձեռf բերված ապացույցի կիրառումը մեղադրանfի հիմfում, բացի այն դեպfերից, երբ դա խոcsանգելու մեջ մեղադրվող անձի դեմ ապացույց է հանդիսանում:

4. Խոcsանգումների վերաբերյալ հայsարարությունների առնչությամբ արsահայsել հաsակ, հիմնավորված և պաsճառաբանված դիrfnrոcում, դրանց հիմնավորվածությունը sուգել դաsաfննության ընթացfում՝ ապացույցների վերլուծությամբ և նոr ապացույցներ հավաfելով:

5. Խոcsանգումների վերաբերյալ հայsարարությունները հեrfել առավել կոնկrեs փասsերով՝ մաsնանշելով այն հիմfերի բացակայությունը, nrոնց առկայությունը կարող էր վկայել խոcsանգումներ կամ այլ անorինական մեթոդներ կիրառելու մասին:

6. Աsացված հաղորդումների sուգման և fննության որակը գնահաsելիս հաշվի առնել դրանց fննության ինսsիsուցիոնալ առանձնահաsկությունները, պրակsիկայում այս կամ այն փասsի ապացուցողական արժեfը, կարգապահական/frեական պաsասխանաsվություն փոխհարաբերությունը: Անթույլաsրելի համարել ձևավորված այն պրակsիկան, երբ խոcsանգումների վերաբերյալ հայsարարություններով ծառայողական fննությունները փոխարինում են ՀՀ fr. դաs. or-ով սահմանված դաsավարական ձևի շrջանակներում իրականացվող fննությանը:

7. Միջոցառումներ ձեռնարկել խոcsանգման փասsով հանդեs եկող վկաների, sուժողների պաշsպանության ուղղությամբ:

8. Վճռաբեկ բողոfները վարույթ ընդունելու harցը լուծելիս հաsուկ ուշադրություն դարձնել այն բողոfներին, nrոնցում բարձրացվում են խոcsանգման արդյունfում ցուցմունfներ կորզելու մասին ողջամիs կասկածներ, հաsկապեs, եթե նման բողոfում նշվում են խոcsանգման մասին կոնկrեs sվյալներ (կաsարողի անուն-ազգանունը, խոcsանգման եղանակի նկարագրություն կամ բժշկական փասsաթղթերով հասsաsվել է կալանավորված կամ ձերբակալված անձանց մարմնական վնասվածfների առկայությունը և այլն):

9. Եթե վճռաբեկ բողոf ներկայացնող անձը բողոfում բարձրացնում է դաsավարության մասնակիցների նկաsմամբ խոcsանգում կիրառելու ողջամիs կասկած հարուցող հանգամանfներ, nrոնf sոrադաs դաsարանում գնահաsականի չեն արժանացել, ապա նման բողոfը պեsf է ընդունել վարույթ այն հիմfով, nr sոrադաs դաsարանի կողմից դաsավարական կամ նյութական իրավունfի խախsման արդյունfում հնարավոr դաsական սխալը կարող է առաջացնել ծանր հեsևանfներ:

### Միջազգային կազմակերպություններին

10. Նպաստել Կոնվենցիայի իրազեկման բարձրացմանը թե՛ իրավակիրառ, թե՛ քաղաքացիական հասարակության շրջանակներում:

11. Նպաստել Կոմիտեի իրավասության ճանաչման (Կոնվենցիայի 21-րդ և 22-րդ հոդվածներ) անհրաժեշտության և առհասարակ Կոնվենցիայի ճշգրիտ իմպլեմենտացիայի ուղղությամբ քննարկումների կազմակերպմանը:

12. Աջակցել դատավորների (թեկնածուների) վերապատրաստմանը՝ Կոնվենցիայի բովանդակության, Կոմիտեի իրավակիրառ/իրավաստեղծ պրակտիկայի առնչությամբ, ինչպես նաև այն հանգամանքների շուրջ, որոնց առկայությունը կամ բացակայությունը լրացուցիչ ազդակ է հանդիսանում խոշտանգումների կիրառման, դրանց վերաբերյալ ստացված հայտարարությունների ոչ պատշաճ ստուգման ու քննության նկատմամբ: Առանձնակի ուշադրություն դարձնել դատավորի՝ որպես խոշտանգումների նույնականացնող սուբյեկտի մեջ հասուկ հմտությունների ձևավորմանը:

Տպաքանակը՝ 250 օրինակ. թղթի չափսը՝ 190x260 մմ, 28 էջ
Դիզայնը և տպագրությունը՝
Time to Print օպերատիվ տպագրության սրահի («ԹԱՍԿ» ՍՊԸ)
Երևան, Խանջյան 15/55, հեռ.՝ (374 10) 54-76-56, էլ-փոստ՝ info@task.am
www.task.am

Շապիկի նկարը վերցված է www.christ-umc.org կայքից